

Պերինչեքի Դատական Նիստը Աւարտեցաւ Վճիռը 6-8 Ամսուայ Ընթացքին



Ամալ Քլունի մասնակցութիւնը դատական նիստին, պատճառ եղաւ մեծ թիւով լրագրողներու ներկայութեան

Յունուար 28-ին, Մարդու իրաւունքներու եւրոպական Դատարանի (ՄԻԵԴ) Մեծ Պալատէն ներս աւարտեցաւ «Պերինչեք ընդդէմ Զուլիցերիա Գործի» լսումը: «Արմէնիբրես»-ի փոխանցմամբ՝ Եւրոպական դատարանը գործի առնչութեամբ վճիռ կը կայացնէ 6-8 ամսուայ ընթացքին:

Դատավարութեան ընթացքին իրաւաբան ձեռքի Ռոպերթսըն շեշտեց, որ ժամանակակից աշխարհը պէտք է ապրի ազատ, առանց խտրականութեան եւ ատելութեան: Իր ելոյթին մէջ Ռոպերթսըն թախաբան փառասիրտ անուանեց թրքական Հիթլերը:

Ռոպերթսընի գործակից Ամալ Քլունի իր ելոյթի ընթացքին անդրադարձաւ թուրքիոյ մէջ խօսքի ազատութեան մուսուլմաններու եւ մարդու իրաւունքներու խախտումներուն: Քլունի նաեւ անդրադարձաւ Հրանդ Տինքի սպանութեան՝ շեշտելով, որ այն թուրք ազգայնա-

կաններու ձեռքի գործն էր:

Դատավարութեան ընթացքին, դուրսը տեղի կ'ունենային բողոքի ցույցեր: Դատարանի դիմաց հաւաքուած էին հայեր եւ թուրքեր: Տասնեակ ոստիկաններ եւ ոստիկանական մեքենաներ կը հսկէին ցույցի մասնակիցներուն: Հայկական կողմի աջակիցները հանդէս կու գային «Այլեւս ոչ մէկ 1915» եւ «Ժամանակն է» կոչերով:

Դատական առաջին նիստի ընթացքին նախ խօսքի առիթ տրուեցաւ թուրք ազգայնական Տողու Պերինչեքի փաստաբանին: Ան յայտնեց, որ Պերինչեք «չի հերքեր սպանութիւնները, բայց՝ ոչ ցեղասպանութիւնը»: Ապա ելոյթ ունեցան Զուլիցերիոյ ներկայացուցիչները՝ որպէս պատասխանող կողմ, Հայաստանի եւ թուրքիոյ պատուիրակութիւնները:

Հայկական կողմէն հանդէս

Շաբ.ը էջ 4

Սերժ Սարգսեան. «Նման Զօր Բանակ Մենք Վաղուց Չենք Ունեցել»

Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի նախագահներ Սերժ Սարգսեանն ու Բակո Սահակեանը, Յունուար 28-ին, Բանակի կազմաւորման 23-ամեակի առթիւ այցելեցին «Եռաբլուր» զինուորական պանթէոն, ծաղիկներ եւ ծաղկեպսակ դնելով հերոսներու շիրիմներուն: Այս առթիւ իր շնորհակարարական խօսքին մէջ Սարգսեան յայտարարեց՝ «մեր երկրի եւ ժողովրդի համար բանական աւելին է, քան պարզապէս պետական կառուցը»:

Նախագահը իր ուղերձին մէջ մասնաւորապէս ըսած է. - «Հայոց բանակը բառացիորէն ամէն օր եւ ամէն դիշեր պաշտպանում է մեր կեանքը՝ շատ յաճախ մարտի բռնութիւնով մեր հայրենիքի հանդէպ ոտնձգութիւններ կատարող երուզակների դէմ: Այսօր մեր վզին փորձում են փաթաթել նոր տիպի պատերազմ, որովհետեւ բոլոր նախորդ տիպերի պատերազմներում նրանք տանուլ են տուել: Այսպէս կոչուած «զիւրախաների պատերազմը» նոյնպէս տանուլ են տալու: Դրա անհեռանկարայնութիւնն արդէն ակնյայտ է նոյնիսկ նրանց համար, ովքեր մեզ անուանում են «թշնամի»:

Նախագահի խօսքով, Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարուուայ ընթացքին ոմանք հայերուն որոշած են վախցնել մարդասպա-

նութեամբ՝ հայասպանութեամբ: 100 տարի առաջ կատարուածը պետականորէն մշակուած եւ յաջող իրականացուած ցեղասպանութիւն էր, որ կրնար միայն իրականացուիլ հայկական պետականութեան բացակայութեան պայմաններուն մէջ:

«Այսօր՝ այս տօնական օրը, դժուար հասկացողների համար ես մէկ անգամ եւս յայտարարում եմ. հայ ժողովուրդը վերադարձել է կեանք, վերադարձել է ժողովուրդների միջազգային ընտանիք իր պետականութեամբ եւ բանակով: Նա վերադարձել է դժոխքից: Դժոխքը վերապարձներին ահաբեկելու փորձերը լուրջ չեն: Նման փորձերը ուշացած են առնուազն 100 տարով», - ըսած է Սարգսեան աւելցնելով. - «Հարց է ծագում. ի՞նչ կապ ունեն 100 տարի առաջ կատարուած դէպքերը մեր այսօրուայ բանակի հետ: Արդեօ՞ք, ոեւէ մէկի հիւանդ ուղեղում կայ Հայաստանը վերացնելու ծրագիր: Պատասխանում եմ. այդ ծրագրերը ոչ միայն ոմանց ուղեղներում են, այլեւ հարեւան երկրի բարձրաստիճան պաշտօնեաների շուրթերին: Դրանք հնչում են բոլոր հնարաւոր բարձրաստիճանից: Լստ նրանց՝ ոչ միայն Արցախը, այլեւ

Շաբ.ը էջ 4

«Ազատութեան Տունը» Հայաստանը Կը Դասէ Մասամբ Ազատ Երկիրներու Շարքին

Աշխարհի ամենազղեցիկ իրաւապաշտպան կազմակերպութիւնները՝ «Ազատութեան Տունը» (Freedom House) հրապարակեց «Ազատութիւնը Աշխարհի Վրայ» տարեկան իր գեկոյցը, կրկին արձանագրելով որ, Հայաստան, ինչպէս եւ նախորդ տարիներուն, կը շարունակէ մնալ մասամբ ազատ պետութիւններու շարքին:

Freedom House-ի մասնագէտները աշխարհի 195 պետութիւններու եւ 15 չճանչցուած տարածքներու մէջ ազատութիւններու վիճակը գնահատած են 7 կէտ աստիճաններով. որքան աւելի բարձր է երկրի ստացած կէտը, այնքան իրավիճակը այդ պետութեան մէջ աւելի խնդրահարուց է: Հայաստան այս առումով միջին միակողմանի ունեցող պետութիւններու շարքին է: Հայաստանի Քաղաքական համակարգի ազատութիւնը կը գնահատուի 5, իսկ քաղաքացիական ազա-

տութիւններունը՝ 4 միակողմանի:

Freedom House անդրադարձած է նաեւ Լեռնային Ղարաբաղի մէջ ազատութիւններու վիճակին՝ չճանչցուած հանրապետութիւնը եւս դասելով մասամբ ազատներու շարքին:


Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի հետ միասին Freedom House-ի մասամբ ազատ պետութիւններու խումբին մէջ յայտնուած են Եւրամիութեան հետ Ընկերակցութեան պայմանագիր ստորագրած Վրաստանը, Ուքրանիան եւ Մոլդովան, ինչպէս նաեւ Եւրասիական Տնտեսական Միութեան անդամակցող Ղրղզստանը:

Ամերիկացի իրաւապաշտպաններու գնահատմամբ, տարածաշրջանէն ներս մարդու իրաւունքներու ոտնահարումներուն հետ կապուած առաւել մտահոգիչ իրադրութիւնը ստեղծուած է Ատրպէյճանի մէջ, որ դասուած է ոչ ազատ պետութիւններու շարքին:

ՄԴՀԿ Երիտասարդները ԱԳ Նախարարին Յորդորեցին Անցնել Գործողութիւնների

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան «Սարգիս Տիրուհի» ուսանողական-երիտասարդական միութեան անդամներն Յունուար 27-ին Արտաքին գործերի նախարարին կոչ արեցին անցնել ակտիւ գործողութիւնների միջազգային հանրութեան շրջանում Ատրպէյճանի իրականացրած արկածախնդիր գործունէութիւնը կանխելու համար:

«Պարոն նախարար, 2015 թ-ի սկզբից ի վեր Ատրպէյճանը շարունակում է իր ագրեսիւ գործողութիւնները Տաւուշի եւ Արցախի ողջ երկայնքով: Հայրենիքի պաշտպանութեան ժամանակ մղուած մարտերում միայն այս տարի զոհ ունել են տասնեակից աւել սպաներ եւ զինուորային: Չնայած առկայ աննախադէպ լարուած իրավիճակին՝ Արտաքին գործերի նախարարութիւնը՝ ի դէմս Ձեզ, որեւիցէ



ՄԴՀԿ երիտասարդական միութեան անդամներու երթը Երեւանի մէջ

հրապարակային յայտարարութեամբ հանդէս չի եկել: Մենք այդպէս էլ ականատես չեղանք, որ

Շաբ.ը էջ 5

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Հայկական բիզնեսի հիասթափությունը

ՀԱՎՈՐԲԱԴԱԼԵԱՆ

ՄԱՊ ընկերությունների սեփականատերեր, ՀՀ-ի խմբակցությունների պատգամավոր Ալիկ Պետրոսյանը ասում է, որ եթե գերազանց վարկ է տրամադրվում տարեկան 24 տոկոսով, կամ թեկուզ արտադրողին, ապա հայկական արտադրանքը չի կարող մրցունակ լինել ռուսական շուկայում:

ՄԱՊ-ի սեփականատերերը իրա-
կացի է: Հայաստանում տրամադ-
րվող վարկային տոկոսները հան-
դիսանում են ոչ թե բիզնեսի խթան-
ներ, այլ հակառակը՝ ինդիքներ
են շարունակում տնտեսության հա-
մար, փոխարենը նպաստում մի
քանի խոշոր կապիտալիստների
գործին, որոնք ազատում են ալե-
լորդ մրցակիցների վտանգավոր
պոտենցիալից: Այդ մի քանի կապի-
տալիստները, որոնց ձեռքում է
հանրապետության ֆինանսա-տնտե-
սական ռեսուրսների գերակշիռ մա-
սը, տնօրինում են նաև քաղաքա-
կան, իշխանական լծակներ:

Արդիւնքն էլ հենց այն է, որ
այդ ամենով հանդերձ վարուող
տնտեսական քաղաքականությունը
բերում է երկար փողերի դեֆիցի-
տի, ռիսկերի մեծացման եւ որպէս
հետեւանք՝ նաև բանկային տոկոս-
ների բարձրացման: Բանկերն իրենց
վարկային պայմաններով արձա-
գանքում են ընդամենը տնտեսու-
թեան ռիսկայնությունն ու հեռան-
կարներին: Օրինակ, եթե միջազ-
գային վարկանիշային կազմակեր-
պությունները Ռուսաստանի տնտե-
սական իրավիճակից բխելով նուա-
զեցնում են նաև Հայաստանի վար-
կանիշը՝ այսինքն ամբողջ աշխար-
հին ազդարարում են, որ Հայաս-
տանի ռիսկերը մեծացել են, ապա
որեւէ ողջախոհ բանկիր ոչ միայն
չի շտապի վարկաւորման պայման-
ները դիւրացնել, այլ կը շտապի
անել հակառակը՝ ապահովագրուել
ռիսկերից:

Հետեւաբար, խնդիրը վարուող
տնտեսական քաղաքականութիւնն
է, կամ աւելի ճիշտ՝ դրա բացակա-
յութիւնը: Տնտեսական քաղաքա-
կանութեանը Հայաստանում վեր-
ջին շրջանում փոխարինում է մի
բան՝ «բացել ենք 170 միլիոնանոց
շուկայ, գնացէք, եւ օգտուէք»: Դա է
Հայաստանի կառավարութեան
տնտեսական քաղաքականութեան
սկիզբն ու վերջը: Աւելի ճիշտ
միայն վերջը, ինչպէս երեւում է
Ռուսաստանի տնտեսական վիճակից:

Բարձր տոկոսներից եւ ընդ-
հանրապէս հայկական արտադրան-
քի ինքնարժէքը նուազեցնելուն
ուղղուած տեղական քայլերի ան-
բաւարարութիւնից դժգոհ Ալիկ
Պետրոսյանը մէկն էր այն գործա-
ւարներից, ովքեր ողջունում էին
Եւրասոցյացման քաղաքականութիւ-
նից կտրուկ շրջադարձը դէպի
Եւրասիական միութիւն, ասելով,
որ իրենց արտադրանքի շուկան
ռուսականն է եւ առանց դրա
հնարաւոր չէ:

Իսկ գուցէ Ալիկ Պետրոսյան-
ին, որպէս քաղաքականութեան
մէջ ներգրաւուած սեփականատէր,
արժէք ոչ թէ զբաղուել իշխանու-
թեան խիստ կոնիուկտուրային,
տնտեսութեան զարգացման եւ անվ-
տանգութեան հետ որեւէ աղերս
չունեցող քայլի արդարացմամբ,
այլ որպէս պատգամաւոր՝ պետու-
թեան, եւ որպէս սեփականատէր՝
իր բիզնեսի հեռանկարներն ու
ռիսկերը գնահատելով: Ու այդ

փորձի, համարժէք գնահատականի
դէպքում, Ալիկ Պետրոսյանը գուցէ
տեսնէր այն ռիսկերը, որին են-
թարկում էին թէ Հայաստանի
տնտեսութիւնը, թէ մասնաւորապէս
հայաստանեան բիզնէսը՝ ներկայիս
տնտեսական քաղաքականութեան
եւ Ռուսաստանի տնտեսա-քաղա-
քական մեղմ ասած վտանգաւոր
հեռանկարների պարագայում:

Որպէս ՀՀ-ական պատգամա-
ւոր, ինչ է անում նա, կամ այն
բացարձակ մեծամասնութիւն
խմբակցութիւնը, որին անդամակ-
ցում է, որպէսզի Հայաստանում
ներդրումային միջավայրը, տնտե-
սական միջավայրը դառնան առա-
ւել զրաւիչ: Ալիկ Պետրոսյանն
այդ կապակցութեամբ ինչպիսի՞
օրէնսդրական նախաձեռնութիւն-
ներ է հանդէս բերել, որը մերժել
է իր կուսակցական կամ գործադիր
ղեկավարութիւնը: Վերջապէս, ու-
մից եւ ինչի՞ց է նա դժգոհում
որպէս բիզնէսմէն, եթէ որպէս պատ-
գամաւոր նա գտնուած է բացարձակ
իշխանութեամբ կուսակցութեան
շարքում եւ քուէվարում այդ կու-
սակցութեան օրինագծերն ու տնտե-
սական որոշումները, այդպիսով
պատասխանատուութիւն կրելով այն
քաղաքականութեան համար, որից
այժմ դժգոհում է:

Իհարկէ, հասկանալի է, որ
կոնկրետ հարցերում, կարելոր
որոշումներում կուսակցական
զօրն ոչ մի գնալը կը լինի բոլոր
տնտեսական ռիսկերից աւելի մեծ
ռիսկ թէ Պետրոսյանին, թէ այդ-
պիսի որեւէ պատգամաւորի հա-
մար: Բայց այդ դէպքում, տեղա-
կան արտադրանքի մրցունակու-
թեան վերաբերեալ արտայայտուող
մտահոգութիւնները զրկւում են
արժէքից:

Ընդհանրապէս, Հայաստանում
կայ գործարարութեան մի շերտ,

որը դեռ շատ խոշոր կամ ամենա-
խոշորը չէ, բայց իհարկէ շատ
աւելին է, քան փոքրը եւ միջինը:
Այդ շերտն է զգալիօրէն ներկայաց-
ուած նաև խորհրդարանում՝ թէ
իշխող, թէ չիշխող մեծամասնու-
թեան խմբակցութիւններում: Այդ
շերտը երեւի թէ ամենազգայուննե-
րից է Հայաստանի ինդիքների
հանդէպ, ներքին ընկալման առու-
մով գուցէ ամենաաղեկուատներից,
քանի որ այսպէս ասած սեփական
մաշկի վրայ է գոտւմ այն ինդիք-
ներն ու շարաբերութիւնները, որ
հաստատուել են Հայաստանի իշ-
խող համակարգի ներսում: Բայց
աղեկուատութիւնը ստուերային
երեւոյթ է մնում, այսինքն դրսե-
ւորում է միայն ոչ կարելոր, կամ
ոչ աղմկոտ թեմաներում: Երբ հեր-
թը հասնում է խաղի կանոնների
համար ընդհանուր շրջանակի առաջ
պատասխանատուութեանը, աղեկ-
ուատութիւնը մղուում է երկրորդ
պլան, եւ կատարում է անձնական
շահից բխող օպորտուն քայլը:

Արդիւնքում ստացուած է Հա-
յաստանի Սահմանադրութեանը հա-
կասող գործարար-խորհրդարան,
որը ոչ այլ ինչ է, քան փակ
բաժնետիրական ընկերութիւն: Իսկ
դրանում ներգրաւուած սուբյեկտ-
ների գլխաւոր նպատակը հանդի-
սանում է այդ ընկերութեան հաւա-
քական գործունէութեան միջա-
վայրի մշտական բարելաւումը: Այս-
տեղ է ինդիքի արմատը: Անհնար է
միաժամանակ ներգրաւուել այդ
միջավայր, ու ակնկալել բիզնէս
միջավայրի բարելաւում:

Յատկապէս ներկայում, երբ
այդ միջավայրի եւ իրական Հա-
յաստանի շահը գտնուում է արմա-
տական հակասութեան մէջ:

«ԼՐԱԳԻՐ»

Ինչպէս հակազդել Էրդողանի ցինիկ քաղաքականութեանը

ԹԱՄԱՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Թուրքիայի վարչապետ Ահ-
մեդ Դաւութօղլուն Հրանտ Դինքի
սպանությունից 8-րդ տարեկից հետ
կապուած յայտարարութիւն է
տարածել՝ կոչ անելով հայերին
նոր սկզբի հիմքեր դնել: Դաւու-
թօղլուն իր ուղերձում նշել է.
«Արդէն 8 տարի է, ինչ մեզ հետ չէ
Հրանտ Դինքը, ով փորձում էր իր
զգացումներով եւ մտքերով լուսա-
ւորել Օսմանեան կայսրութիւնից
Թուրքիայի հանրապետութեանն
անցած կարեւոր ինդիքներից մէ-
կը: Դինքի յարգարժան ընտանիքին
եւ բոլոր նրանց, ովքեր սիրում են
Դինքին, համբերութիւն ենք մաղ-
թում: Հրանտ Դինքը Անատոլիայի
թանկարժէք մի մտաւորական էր,
ով ճանապարհներ էր փնտրում
հայերի եւ թուրքերի համատեղ
սպազան կառուցելու համար:

Այս համատեքստում, հայ-
թուրքական բարեկամութեանը
հաւատացող բոլորին հրաւիրում
ենք նոր սկզբի համար աջակցու-
թիւն ցոյց տալ եւ ուզում ենք
դիմել բոլոր հայերին. Թուրքիան
նախկինում էլ յայտարարել էր, որ
պատերազմի պայմաններում ստիպ-
ուած է եղել կիրառել պարտադիր
զաղթի քաղաքականութիւն, որի
պատճառով ոչ մարդկային հետե-
ւանքներ էին եղել: Թուրքիան կի-
սում է հայերի ցաւը ու վճարական
ջանքեր գործադրում երկու ժողո-
վուրդների միջեւ կրկին զգաց-
մունքային կապեր ստեղծելու հա-
մար: Մեր յարաբերութիւնները

պատանդ վերցրած թշնամանքը
յաղթահարելու համար եւ գլխաւոր-
ապէս երկխօսութեան միջոցով
շարժուելու անհրաժեշտութեան մա-
սին ամենավճռական արտայայ-
տութիւնը 2014 թուականի Ապրի-
լի 23-ի ցաւակցական ուղերձն է:
Ժամանակը, որ կանգ է առել 1915-
ին, կը շարունակուի, երբ մեծ
տրաման հետեւում թողնելու ճա-
նապարհով տաբուները քանդուեն:
Թուրքիան իր անունից այդ կէտը
յաղթահարել է: Հնարաւոր է, որ
երկու տեղաբնիկ ժողովուրդներ
հասնեն միմիանց հասկանալու եւ
միասին ապագային նայելու հա-
տուութեանը: Մի աշխարհագրա-
կան վայրում ապրող եւ երկար
ժամանակ պատմութիւնը կիսող
հայերը եւ թուրքերը բոլոր հար-
ցերը միայն իրար մէջ կարող են
խօսել, լուծման ճանապարհներն էլ
միասին կարող են փնտրել: Այս
պատճառով անհրաժեշտ է, որ փո-
խադարձ վստահութեան եւ համա-
գործակցութեան հասկացութիւն
զարգացնենք, 800 տարուայ համա-
տեղ պատմութեան լոյսի տակ միմ-
իանց նորից ճանաչենք եւ մարդ-
կային յարաբերութիւնների մէջ
լինենք: Դրա համար մեր հայ
բարեկամներին հրաւիրում ենք
աւելի շատ այցելել Թուրքիա՝ փո-
խադարձ կարծրատիպերը վերաց-
նելու համար»: Վերջում Դաւու-
թօղլուն ամփոփել է. «Կիսել ցաւե-
րը, վիրակապել վէրքերը եւ կրկին
կարողանալ ստեղծել բարեկամու-
թիւն: Մեր անկեղծ ցանկութիւնը
սա է»:

Բրիտանական The Indepen-
dent թերթում հրատարակուել է
մերձաւորարեւելեան հարցերով
փորձագէտ Ռոբերտ Ֆրիսկի «Գա-
լիպոլիի հարիւրամեակը Հայկա-
կան Հոլոքոսթը թաքցնելու ամօ-
թալի փորձ է» խորագրով յօդուած
ը, որում նշուում է. «Այն ժամա-
նակ, երբ համաշխարհային առաջ-
նորդները, այդ թւում նաև արքա-
յազն Չաուրը եւ Աւստրալիայի ու
Նոր Զելանդիայի վարչապետները
Թուրքիայի կառավարութեան հրա-
ւերով կը հաւաքուեն Գալիպոլ-
իում՝ ի յիշատակ Առաջին համաշ-
խարհային պատերազմի ժամանակ
տեղի ունեցած ճակատամարտի, 1.5
միլիոն քրիստոնեայ հայերի ուր-
ուականները կը գտնուեն նրանց
հետ: Դիւանագիտական հիմարու-
թեան այդ աննախադէպ ակտի
համար Թուրքիան պլանաւորում է
օգտագործել 1915 թուականին Գա-
լիպոլի դաշնակցային (անգլո-
ֆրանսիական) զորքերի ներխուժ-
ման 100-ամեակը եւ դրանով իսկ
փորձել խեղդել Օսմանեան կայս-
րութիւնում հայերի զանգուածա-
յին սպանութիւնների յիշատակը:
Թուրքերն արդէն իսկ հրաւերներ
են ուղարկել 102 երկրի ղեկավար-
ների՝ Գալիպոլիում մասնակցելու
համար Ապրիլի 24-ի տօնակատա-
րութիւններին: Դա այն օրն է, երբ
Հայաստանը մշտապէս նշում է
Օսմանեան Թուրքիայում իրակա-
նացուած ցեղասպանութեան իր իսկ
զոհների յիշատակը: Նախաձեռնու-

Շաբ.ը էջ 18



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՌՄՍԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱՋԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱՎԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԱՆՅԱՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փորձագետ. «Ադրբեջանի Վրայ Ազդեցութեան Գործիքները Քչանում են»

Ադրբեջանի ազդեցիլ քաղաքականութեանը փոխազդելու գործիքները քչանում են: Այդ մասին մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարել է Տարածաշրջանային հետազոտութիւնների կենտրոնի տնօրէն Ռիչարդ Կիրակոսեանը՝ մեկնաբանելով հայ-ադրբեջանական սահմանի լարուածութեան սրացումը:

Կիրակոսեանի խօսքով՝ չնայած Ադրբեջանը երկար տարիներ շարունակ խոշոր ներդրումներ է կատարել ռազմական ոլորտում, Հայաստանի պաշտպանական դիրքն աւելի ուժեղ է, քան Ադրբեջանի յարձակողական հնարաւորութիւնը:

Կիրակոսեանը նշել է, որ ԵԱՀԿ-ի Մինսկի խումբը հաւատարիմ է դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման միասնական եւ հետեւողական ուղղութեանը՝ ի տարբերութիւն Կրեմլի դեկալարութեան: Նրա գնահատմամբ՝ ՌԴ-ի քաղաքական ուղղութեանը անկանխատեսելի է. «Ռուսաստանը Ադրբեջանին հիմնական գէնք մատակարարողներից մէկն է: Իսկ հաշուի առնելով Ռւկրաիանայի



Տարածաշրջանային Հետազոտութիւնների կենտրոնի տնօրէն Ռիչարդ Կիրակոսեան

իրադարձութիւնների զարգացումը, Ղարաբաղի նկատմամբ Ռուսաստանի աւանդական դիրքորոշումը նոյնպէս կարող է փոխուել»:

Անդրադառնալով Գիւմրիի ողբերգութեանը՝ Կիրակոսեանը համոզուածութիւն է յայտնել, որ Գիւմրիի ողբերգութիւնը հայ-ուսական յարաբերութիւններում նոր ճգնաժամ կը լինի, որը ռազմավարական գործընկերների միջեւ անհամաչափութիւն կը ծնի:

Նալբանդեանը Անտեղի Է Համարում Ռուսաստանի Յետ Յարաբերութիւնները վերանայելը

Գիւմրիի ողբերգութեան հանդէպ էմոցիոնալ մօտեցումը հասկանալի է, բայց դրանից հայ-ուսական յարաբերութիւնները վերանայելու անհրաժեշտութիւն չի ծագում: Այս մասին Յունուարի 26-ի մամուլի ասուլիսում յայտարարել է ՀՀ արտգործնախարար էդուարդ Նալբանդեանը:

Ի պատասխան հարցին, թէ Գիւմրիի ողբերգութեան համատեքստում գոհ են արդեօք ՀՀ իշխանութիւնները ուսական կողմի հետ յարաբերութիւններից կամ պէտք է ինչ-որ բան փոխել, նախարարը նշել է. «Չեմ կարծում ճիշդ է կապակցել այդ երկու բաները՝ մեր երկկողմ յարաբերութիւնները եւ ողբերգութիւնը, որ եղաւ Գիւմրիում, որի վերաբերեալ հանրային կարծիքի վրդովմունքը եւ գայրոյթը մարդկային է եւ հասկանալի: Այնպէս ինչպէս, որ դուք էք ներկայացնում, որ պէտք է վերանայել, փոխել՝ չեմ կարծում տեղին է: Մենք ունենք դաշնակցային, ռազմավարական յարաբերութիւններ Ռուսաստանի հետ, համատեղ ջանքերով մտադիր ենք այդ յարաբերութիւններն առաւել խորացնել, ամրապնդել եւ զարգացնել»:

էդուարդ Նալբանդեանն ընդգծել է, որ ողբերգութեան օրը հանրապետութեան նախագահը սեղեկտորային խորհրդակցութիւն

է անցկացրել իրաւապահ մարմինների դեկալարների հետ, յանձնարարականներ տուել եւ նշել, որ յանցագործութիւնը պէտք է բացայտուի ամենակարճ ժամկէտում, մեղաւորները պատժուեն օրէնքի ամբողջ խստութեամբ: Այս հարցում հայկական կողմը համագործակցում է ուսաստանցի գործընկերների հետ:

Նախարարը յիշեցրել է, որ նախագահները հեռախօսազրոյց են ունեցել, կապերը պահպանուած են բոլոր մակարդակներով: «Փոխըմբռնում կայ առ այն, որ քննութիւնը պէտք է բաց եւ թափանցիկ լինի, եւ մեղաւորները պէտք է պատժուեն օրէնքի ամբողջ խստութեամբ»:

Հարցին, թէ արդեօք ուսական կողմը խախտել է երկկողմ համաձայնագիրը վալերի Պերմյակովի ձերբակալութեան ընթացքում, նախարարը պատասխանել է, որ ըստ օրէնքի՝ փաստաթղթերի մեկնաբանութեան տարաձայնութիւնների դէպքում կողմերը դիմում են ԱԳՆ, բանակցութիւններ են անցկացնում նման հարցերի լուծման համար յանձնաժողով ստեղծելու ուղղութեամբ: Եթէ այդպիսի յանձնաժողով է ստեղծուած եւ դարձեալ արդիւնք չի լինում, այդ ժամանակ հարցը լուծուած է դիւանագիտական ճանապարհով:

Առեւտրականները Կը Դիմեն Ծայրայեղ Միջոցների

«Շրջանառութեան հարկի մասին» նոր օրէնքի կասեցում պահանջող՝ փոքր ու միջին բիզնեսի ներկայացուցիչները հետագայ բողոքի ակցիաների ժամանակ կը դիմեն ծայրայեղ միջոցների: Առեւտրականները Յունուարի 27-ին, 5 ժամ Կառավարութեան մօտ ապարդիւն պահանջեցին վարչապետի հետ հանդիպում:

«Վաղը չէ միւս օրը մենք անցնում ենք աւելի կտրուկ, վճռական մեթոդների՝ չխախտելով ՀՀ սահմանադրութիւնը: Պայքարը հռչակուած ենք երկարատեւ, տեւական, կը կիրառենք բողոքի այլ հնարաւոր ձեւերը: Կը բերենք, կը յանձնենք մեր բոլոր ԱԶ-ները, կը յանձնենք մեր բոլոր դրամարկղերը, կը սկսուեն գործադուլներ, կը լինի բողոքի ակցիա կառավարութեան շէնքի դիմաց, հնարաւոր են պիկետներ, ճանապարհներ փակել, կը լինի բողոքի ակցիա նաեւ Ազգային ժողովի դիմաց», - NEWS.am-ին բողոքողներից Արտակ Խաչատրեանը:

Նախորդ օրը եւս առեւտրականները հաւաքուել էին Կառավարութեան

Դաշնակցական Շարքերը Լքածները Յայտարարում են Ծնունդների Մասին

Օրեր առաջ Դաշնակցութեան շարքերը լքած 24 լուսնիներ ճնշումների են ենթարկուած «Հիմնադիր Խորհրդարանին» միանալու համար: Այս մասին յայտարարութիւն է տարածել Հիմնադիր Խորհրդարանի քարտուղարութիւնը՝ պնդելով, թէ նախկին դաշնակցականներին են այցելում հանրապետական գիւղապետներ, ոստիկանութեան թաղայիններ եւ Ազգային Անվտանգութեան Ծառայողներ՝ հոգեբանական եւ այլ բնոյթի ճնշումներ գործադրելով նրանց նկատմամբ:

Կուսակցութեան շարքերը լքած Արմէն Լամբարեանը «Ազատութեան» հետ զրոյցում հաստատեց, որ իր նկատմամբ հոգեբանական ճնշումներ են գործադրել ոստիկանութեան աշխատակիցները:

«Ես տանը չեմ եղել, որ ոստիկանները եկել են իմ տուն: Յետոյ հեռախօսով զանգահարել ու սկսել են հարցաքննել», - պատմում է Լամբարեանը. - «Հիմնական հարց սա էր՝ ինչո՞ւ էք դուրս եկել, ինչո՞ւ էք միացել Հիմնադիր Խորհրդարանին: Ու որոշակի անկէտային լրացումներ են արել՝ ընտանիքի կազմը, որտեղ էք աշխատել, ինչ եկամուտ ունենք եւ այլն: Զանգահարողները թաղայիններն են եղել»:

Լամբարեանի խօսքով՝ իր արդէն նախկին կուսակից ընկերներին էլ գիւղապետերն են հարցաքննել, ոմանց՝ ոստիկանութեան, միւսներին էլ՝ ԱԱԾ աշխատակիցները: Լամբարեանն անօրինական ինքնագործունէութիւն է որակում իրաւապահ մարմինների ու յատկապէս ՀՀԿ-ական գիւղապետերի այս գործունէութիւնը:

«Սա նման է հալածանքների: Մարդը յանցագործ չէ, ընդամէնը կուսակցութիւնից դուրս է եկել, բայց դա իրենց իրաւասութիւնների շրջանակում չէ: Գիւղապետը ինչի՞ համար է հետաքրքրուած... մարդու իրաւունքն է, որտեղ կ'ուզի՝ կը մնայ, որտեղից կ'ուզի՝ դուրս կը գայ», - ասում է Լամբարեանը:

Հիմնադիր Խորհրդարանի մամուլի խօսնակ վարուժան Աւետիսեանը պնդում է, որ իրաւապահ մարմիններին ու գիւղապետերի հարցաքննութիւններն ու տուեալները հաւաքագրելու փորձերը այլ ենթատեքստ ունեն: Աւետիսեանն ասում է՝ «Փորձում են վախեցնել

նրանց, որ չանցնեն մեր շարքերը»:

«Մարդկանց հարցեր են տալիս՝ ակնարկելով նրանց խոցելի տեղերը, որ կարող են երեխային կամ իրեն աշխատանքից ազատել, սեփականութիւնից զրկել, բիզնէսը խլել եւ այլն», - ասում է Հիմնադիր Խորհրդարանի ներկայացուցիչը:

Աւետիսեանը վստահ է, որ այժմ իշխանութեան հետ համագործակցող Դաշնակցութիւնը քաջատեղեակ է՝ ինչ է կատարուած իր նախկին կուսակիցների հետ:

Դաշնակցութեան խորհրդարանական խմբակցութեան քարտուղար Աղուան Վարդանեանը, գառանցանք համարելով այս պնդումը, նշում է որ կուսակցութեան շարքերը լքածներից միայն երկուսն են Դաշնակցութեան անդամ եղել:

«Ես չեմ ցանկանում որեւէ յայտարարութիւն մեկնաբանել», - «Ազատութեանը» փոխանցեց Վարդանեանը՝ յաւելելով, թէ Դաշնակցութեանն այս ամենում ներքաշուլ Հիմնադիր Խորհրդարանի փորձերն անտեղի են. - «Ես հասկանում եմ, թէ նրանց վրայ ինչպէս են ազդել կոնկրետ մարդիկ, Հիմնադիր Խորհրդարանի անդամները ինչ են արել... իմ խորհուրդը կը լինի այդ մարդկանց, որոնք այլեւս դաշնակցական չեն, կամաւոր եւ հրապարակային յայտարարել են, որ դուրս են գալիս, թող վայելեն Հիմնադիր Խորհրդարանի անդամակցութիւնը, եւ եթէ կոնկրետ իրենց հանդէպ որեւէ ճնշում կայ, այդ մասին բարձրաձայնեն, անուններ նշեն եւ չփորձեն Դաշնակցութեանը ներքաշել իրենց խաղերի մէջ: Դաշնակցութիւնը դրա հետ որեւէ կապ չունի»:

Դաշնակցութեան շարքերը լքած ու Հիմնադիր Խորհրդարանին միացած Արմէն Լամբարեանը չի պատրաստուած ոստիկանութիւն դիմել՝ նշելով, որ իրեն անօրինական հարցաքննողները հենց ոստիկանութեան աշխատակիցներն են եղել:

Հիմնադիր Խորհրդարանի մամուլի խօսնակ վարուժան Աւետիսեանն էլ պնդում է, որ իրենց յայտարարութիւնն արդէն հաղորդում է յանցագործութեան մասին. - «Թող ոստիկանութիւնը զբաղուի դրանով, թէպէտ քիչ հաւանական եմ համարում դա», - «Ազատութեանը» ասաց նա:

Գիւմրիի Բախումների Կազմակերպիչները Քրեական Պատասխանատուութեան Կ'ենթարկուեն

Յունուարի 15-ին՝ Աւետիսեանների ընտանիքի սպանուած անդամների յուղարկուածութիւնից յետոյ, Գիւմրիում ՌԴ հրապատարանի առջեւ ցուցարարների եւ ոստիկանների միջեւ տեղի ունեցած բախումների կազմակերպիչները կ'ենթարկուեն քրեական պատասխանատուութեան: Այս մասին Յունուարի 28-ին, լրագրողներին ասաց ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարեանը:

«Ձի լինում էրպէս, որ ինչ-որ մարդիկ կարող են մարդկանց տրամադրել նման երեւոյթների, եւ կազմակերպիչներն անպատիժ մնան: Նրանք, ովքեր կազմակերպել էին այդ ջարդը, նրանք, ում մտքով անցել էր, որ կարելի է ոստիկաններին քարերով ծեծել, այդ մարդիկ պէտք է գտնուեն

ու պատժուեն», - ասաց նա:

Անդրադառնալով փաստին, որ այդ օրուայ բողոքի ակցիայի մասնակիցներին հերթով կանչում են ոստիկանութիւն, ոստիկանապետն ասաց, որ դա արւում է միայն բախումների կազմակերպիչներին բացայայտելու նպատակով:

Յունուարի 12-ին Գիւմրիի Միասնիկեան փողոցի տներից մէկում հրազենային վնասուածքներից սպանուած են գտել Աւետիսեանների ընտանիքի 6 անդամներին, այդ թւում՝ մէկուկէս տարեկան դստերը: Վեց ամսական Սերյոժա Աւետիսեանը վնասուածքներ էր ստացել եւ տեղափոխուել է հիւանդանոց, սակայն դէպքից 7 օր անց հիւանդանոցում մահացել է նաեւ նա:

մօտ, նրանք հանդիպում էին պահանջում վարչապետի հետ, սակայն նա այդպէս էլ չի ջալ՝ փոխարէնը առաջարկելով ընդունել առեւտրականներից 10-ին Կառավարութեան շէնքում:

ԼՈՒՐԵՐ

«Ամօթ, Երիտթուրք «Ղասաբների» Կողմից Քայերի Կոտորածի Օրը Տօն Ենք Նշելու»

Թուրք յայտնի մտաւորական «Ներեցէք մեզ, հայեր» ակցիայի կազմակերպիչներից Բասքըն Օրանը թուրքական Radikal պարբերականի իր սիւնակում անդրադարձել է նախագահ էրդողանի կողմից Ապրիլի 24-ը Չանաքալէի յղթանակի օր նշելու հետ կապուած խայտառակ յայտարարութեանը:


Բասքըն Օրանն իր հրապարակման մէջ նշում է, որ այս տարի թուրքիայի նախագահը թուրքական արտաքին քաղաքականութեան արգելակները հանդիսացող Ադրբեյջանի բռնապետ Իլհամ Ալիեւի հետ է նշելու Չանաքալէի ճակատամարտի օրը: «Եւ ամէն տարի Մարտի 18-ին նշուող այդ իրադարձութիւնն այս տարի «նշուելու» է երիտթուրք «ղասաբների» կողմից հայերի դատան կոտորածների խորհրդանշական օր հանդի-

սացող Ապրիլի 24-ին: Յայտնի լրագրող Ռոբերտ Ֆիսկը The Independent-ում գրել էր, որ կոտորուած 1,5 մլն հայերի ուրուականները կը քայլեն նրանց կողքով:

Պէտք է գետինը մտնենք: Լաւ, անտեսում ենք այդ մարդկանց ցաւերը, բայց եկէք չծաղրենք: Նախորդ տարի էրդողանը ցաւակցում էր կոտորուած հայերի թոռներին, իսկ այսօր նրա այս խայտառակութիւնը մարդուն փշաքաղեցնում է: Հայաստանի նախագահին Ապրիլի 24-ին հրաւիրում է Չանաքալէ:

Ի՞նչ է սա: Ի՞նչ տիպի ամօթ: Որոշների համար հասկանալի լեզուով ասեմ, ի՞նչ մեղք է սա: Թատերական ներկայացմանը պատրաստ էինք, բայց այս ամօթը շատ եղաւ»,-ամփոփել է Բասքըն Օրանը:

Չարիք. «Հայ-Իրանական Յարաբերութիւնները Կարող Են Աշխարհի Համար Լաւ Օրինակ Լինել»



Սերժ Սարգսեան կ'ընդունի Իրանի արտաքին գործոց նախարար Ջաւադ Չարիֆին ու անոր ընկերակցող պատուիրակուբեան անդամները

ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանն Յունուարի 27-ին ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետութեան արտաքին գործերի նախարար Մոհամադ Ջաւադ Չարիֆին: Ողջունելով հիւրին եւ նրա գլխաւորած պատուիրակութեանը՝ Հանրապետութեան նախագահը կարեւորել է բարձրաստիճան փոխայցելութիւնները, որոնք, նրա համոզմամբ, հայ-իրանական յարաբերութիւնների օրակարգը եւ համագործակցութեան զարգացման հեռանկարները քննարկելու լաւ հնարաւորութիւն են:

Սերժ Սարգսեանը նշել է, թէ ջերմութեամբ է յիշում 2013 թուականին Իրանի Իսլամական Հանրապետութիւն կատարած իր այցը եւ նախագահ Հասան Ռոհանիի հետ ունեցած հանդիպումն ու պայմանաւորուածութիւնները, որոնց իրագործման, ինչպէս նաեւ բարեկամ իրանի հետ յարաբերութիւնները մշտապէս նորոգելու եւ խորացնելու հարցում Հայաստանը պատրաստակամ է ու շահագրգիռ:

Արտգործնախարար Ջարիֆն ընդգծել է, որ հայ-իրանական յարաբերութիւնները կարող են աշխարհի համար լաւ օրինակ լինել,

թէ ինչպէս մահմեդական եւ քրիստոնէական երկրները կարող են կողք-կողքի խաղաղ համակեցութիւն ունենալ: Նա նշել է, որ Իրանը եւս շահագրգիռ է առանց սահմանափակումների բոլոր ոլորտներում զարգացնել բարեկամ եւ վստահելի գործընկեր Հայաստանի հետ յարաբերութիւնները:


Հանդիպմանը երկուստեք կարեւորուել են տնտեսական համագործակցութեան հարցերը, եւ յատկապէս նախանշուած խոշոր ծրագրերի իրականացման գործում հետեւողական աշխատանքը, որը, կողմերի համոզմամբ, զգալիօրէն կը նպաստի երկու երկրների միջեւ առեւտրաշրջանառութեան ծաւալների աճին եւ իր ազդեցութիւնը կունենայ այլ ոլորտներում յարաբերութիւնների առաւել սերտացմանը:

ՀՀ նախագահը եւ Իրանի արտգործնախարարն անդրադարձել են նաեւ տարածաշրջանի եւ միջազգային արդի խնդիրներին ու մարտահրաւէրներին, որոնց դիմակայման եւ տեւական կայունութեան ու խաղաղութեան հասնելու համար, նրանց կարծիքով, չափազանց կարեւոր է միմեանց աջակցելը:

«Հայաստանն Ու Հայաստանցիներն Աւելի Պատրաստ Են Թուրքիայի Հետ Յարաբերութիւններին, Քան Սփիւռքը»

Մահչուփեան

Թուրքիայի վարչապետ Ահմեթ Դաւութօղլուի գլխաւոր խորհրդական էթէն Մահչուփեանը «1915-ի դէպքերի» 100-ամեակին առնչուող յայտարարութեան մէջ հայկական Սփիւռքի վերաբերեալ ուշադրաւ յայտարարութիւններ է արել: Այս մասին գրում է Internet Haber-ը:



Թուրքիայի վարչապետ Ահմեթ Դաւութօղլուի գլխաւոր խորհրդական էթէն Մահչուփեանը Չանաքալէի մարտերում (Գալիպոլի ճակատամարտի) ընթացքում բազմաթիւ հայ զինուորայիններ են զոհուել:

«Մտածում եմ, որ Հայաստանը կարող է մի ժեստ անել եւ, թէկուզ խորհրդանշական իմաստով, ընդունել հրաւերը, բայց պետութիւնները կարող են չառաջնորդուել բարոյական սկզբունքներով: Նրանք կարող են սակարկելու գնալ: Սերժ Սարգսեանն էլ ասաց՝ մենք ձեզ հրաւիրել էինք, դուք էլ մեր հրաւերին արձագանքէիք»,- ասել է Մահչուփեանը:

Մահչուփեանը նշել է, որ 1915-ի հարկուրամեակի պատճառով այս տարին չափազանց կարեւոր է: Խորհրդականը կարեւորել է նաեւ վարչապետ Ահմեթ Դաւութօղլուի՝ Հրանդ Դինքի մահուան տարելիցին նուիրուած ուղերձը:

Մահչուփեանը նշել է, որ Հայաստանը աւելի է պատրաստ թուրքիայի հետ յարաբերութիւնները հարթելուն, քան հայկական Սփիւռքը, ու նշել է, որ դէպքերի հարիւրամեակը կարելի է յարմար առիթ դարձնել:

«Հայաստանն ու հասարակութիւնը թուրքիայի հետ յարաբերութիւններ հաստատելու համար աւելի պատրաստ է, քան Սփիւռքը: Սակայն պետութեան ձայնն ենք լսում, իսկ պետութիւնը խօսում է պետութեան նման եւ աւելի կոշտ տպաւորութիւն է թողնում: Բայց Հայաստանի փողոցներում քայլելիս եւ մարդկանց հետ զրուցելիս նման իրավիճակ չկայ: Այսինքն՝ այնտեղ տեսնում էք այն, ինչ կը տեսնէք թուրքիայի փողոցներում. մարդիկ ցանկանում են մերձենալ»,- ասել է Մահչուփեանը:

Նա նշել է, որ ժողովուրդների միջեւ «կարօտ» կայ, քանի որ նրանք «նոյն մշակոյթի գաւակներն են, նոյն երաժշտութիւնն են լսում, նոյն բաներն են կարդում»:

Անդրադառնալով թուրքիայի նախագահ Ռեժէփ Թայիփի էրդողանի՝ Սերժ Սարգսեանին ուղղուած ապրիլեան շորտեան հրաւերին՝ Մահչուփեանը նշել է, որ

«Իսլամական Պետութեան» Գրոհայինները Մոսկուում Հրդեհել Են Հայկական Եկեղեցին

«Իսլամական պետութեան» գրոհայինները Իրաքի հիւսիսում գտնուող Մոսկու քաղաքում հրդեհել են հայկական հնագոյն եկեղեցիներից մէկը: Այս մասին հաղորդում է BasNews-ը:

հրդեհել եւ աւերել հանրային նշանակութեան շինութիւնները, շէնքերը, պղծել սրբատեղիները: Գրոհայինները այրել են նաեւ Մոսկուի վահագա շրջանի հայկական եկեղեցին:

Գործակալութեան փոխանցմամբ՝ հայերն ու այլ քրիստոնեաները լքել են քաղաքը, երբ գրոհայինները գրաւէին այն 2014-ի Յունիսին:

Պերինչէի Դատական Նիստը Աւարտեցաւ

Շարունակուած էջ 1-էն

Եկաւ Եւրոպական Դատարանին ներս Հայաստանի կառավարութեան լիազօր ներկայացուցիչ Գէորգ Կոստանեան, Հայաստանի շահերը ՄԻԵԴ-ի մէջ ներկայացնող միջազգային կարգի փաստաբաններ՝ Ամալ Քլունի եւ ձեֆրի Ռոպրթօսը:

2007-ի Մարտի 9-ին, Զուլիցերիական դատարանը Քրէական օրէնսգրքի 216-րդ յօդուածով դատաւարած էր թուրք ազգայնական Տողու Պերինչէին՝ Հայոց ցեղասպանութիւնը ժխտելուն համար, ենթարկելով զինք նիւթական եւ քրէական պատասխանատուութեան:

Զուլիցերիոյ վերաքննիչ դատարանները հետագային մերժած էին Մարտի 9-ի վճռի դէմ ներկայացուած բողոքը:

2013-ին ՄԻԵԴ-ի իրաւասու պալատը դատավճիռ կայացուցած էր, ըստ որում՝ Զուլիցերական դատարանները խախտած են Պերինչէին խօսքի ազատութեան իրաւունքը: Զուլիցերիա ապա դիմած էր ՄԻԵԴ-ի Գերագոյն Պալատին՝ որոշումը վերանայելու պահանջով:

Չարունակուած էջ 1-էն

Անցեալ Օգոստոսին Հայաստան յայտ ներկայացուց մասնակցելու դատավարութեան: Դատավարութեան մասնակցելու դիմում ներկայացուց նաեւ թուրքիան:

Նման Հօր Բանակ

Շարունակուած էջ 1-էն

Հայաստանի ողջ տարածքը «պատմական ասրայէջճանական» հողեր են, եւ այդ հողերը ենթակայ են այսպէս ասած՝ «ազատագրման»: Մենք շատ լաւ գիտակցում ենք նման «ծրագրային» հետտորաբանութեան թիրախները: Իսկ ի՞նչ ենք ասում մենք: Ասում ենք՝ Արցախի ազատ ապրելու իրաւունքը չի քննարկուած: Վերջակէտ»:

Ս.Դ.Յ.Կ. - ԹՈՒՐՔԻՈՅ ՍՈՑԻԱԼԻՍՏ ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՅԱՆԴԻՊՈՒՄ



Շաբաթ, 24 Յունուարին, Ս.Դ.Յ.Կ. հանրապետության Կուսակցությունը ներկայացնող մարմին մը, կազմուած Ս.Դ.Յ.Կ. Կեդրոնական վարչութեան եւ Լիբանանի Շրջանի վարչիչ Մարմինի ընկերներէն, ընդունած է այցելութիւնը Թուրքիոյ Սոցիալիստ վերակազմեալ կուսակցութիւնը ներկայացնող պատուիրակութեան մը, որուն մաս կը կազմէին Թունճա Երլմազ (համանախագահ), Թիւրաչ Հաթիմ եւ Պէրէքէթ: Սոցիալիստ վերակազմեալը Թուրքիոյ մէջ գործող այն քաղաքական խմբաւորումներէն է, որոնք կ'ընդունին Հայոց Յեղափոխութեան իրողութիւնը եւ իրենց ծրագրային փաստաթուղթերուն մէջ կը պահանջեն որ իշխանութիւնները նոյնպէս ընդունին այդ ճշմարտութիւնը: Կուսակցութիւնը մաս կը կազմէ Թուրքիոյ ճարտարագիտական կուսակցութիւնները համախմբող Ժողովրդային դեմոկրատական համախմբումին: Դեռ շատ վերջերս, այս համախմբման

ղեկավարը՝ Սէլահտտին Տէմիրթաշ, դարձեալ հրապարակայնօրէն պահանջեց, որ իշխանութիւնները ճանչնան Հայոց Յեղափոխութեան իրողութիւնը: Հանդիպման ընթացքին քննարկուեցան շրջանային իրավիճակը՝ ծայրայեղ կրօնամոլ եւ անաբեկչական կազմակերպութեան ճնշման միջոցով իշխանութիւններուն կողմէ Հայկական Յեղափոխութիւնը ճանչնալու հնարաւորութիւնը, Թուրքիոյ կողմէ առանց նախապայմանի Հայաստանի շրջափակումը վերացնելը, Արցախի Հարցը ազգերու ազատ ինքնորոշման ծիրին մէջ լուծելը եւ այլ ընդհանրական նիւթեր:

Վերջին երկու հարցերուն կապակցութեամբ այցելուները հաստատեցին որ այդ սկզբունքները արդէն իրենց համոզումներն են: Հանդիպումէն ետք հիւրերը ծաղիկներ գետեղեցին Փարամագի կիսանդրին, որուն գործունէութեանը անոնք լաւապէս ծանօթ էին:

ՄԴՅԵՐԻՊԱՍԱՐՈՂՆԵՐ ԱԳՆԱԽԱՐԱՐԻՆ ՅՈՐՈՐԵՑԻՆ

Շարունակուած էջ 1-էն

Ագն-ն հրաւիրի ԵԱՀԿ ներկայացուցիչներին, Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Միացեալ Նահանգներին դեսպաններին՝ նրանց հետ քննարկելու լարուած իրավիճակը:

Պարոն նախարար, Հայաստանն այս վայրկեանին չյաջատարուած պատերազմի մէջ է, իսկ Արտաքին գործերի նախարարութիւնը կրկին աչքի է ընկնում ինքնուրոյն, տեղտեղ չափից աւել գոռաշաւոր գործողութիւններով: Պատերազմում խօսում է ոչ միայն գէնքը, այլևս դիւանագիտութիւնը: Այս պարագայում, մենք կարծես թէ վերջինից գրկուած ենք:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան «Սարգիս Տիրունի» ուսանողական-երիտասարդական միութիւնը կոչով դիմում է Ձեզ, որպէսզի Դուք այլևս անցնէք ակտիւ գործողութիւնների՝ միջազգային հանրութեան շրջանում Ատրպէյճանի իրականացրած արկածախնդիր գործունէութիւնը կանխելու համար: Դա Ձեր անմիջական պարտականութիւնն է», - Նախարարութեան մօտ Նալբանդեանին ուղղուած նամակն ընթերցեց միութեան վարչութեան անդամ Ռոման Մատինեանը:

Հաւաքուածները նախարարութեան մօտից երթով շարժուեցին դէպի Հայաստանում ՄԱԿ-ի գրասենեակ, որտեղ նոյնպէս նամակ յանձնեցին՝ յորդորելով քայլեր ձեռ-

նարկել եւ կանխել Ատրպէյճանի յետագայ ռազմական գործողութիւնները:

«Պարոնայք, Արցախեան հակամարտութեան լուծմամբ պաշտօնապէս զբաղուած է ԵԱՀԿ Մինսկի խումբը, որի համանախագահներն են Ռուսաստանի Դաշնութիւնը, Ֆրանսիայի Հանրապետութիւնը եւ Ամերիկայի Միացեալ Նահանգները: Դուք մեր պետութեան կողմից ստացել էք մանդատ՝ սպառնալով խաղաղ բանակցութիւններ հակամարտութեան կարգաւորման համար: Չնայած դրան՝ Ատրպէյճանը, ով 1994 թ-ին ի դէպ խնդրում էր Արցախի Հանրապետութեանը գինադադար ստորագրել, շարունակում է ազդեցիկ արկածախնդիր գործողութիւնները Տաուշի մարզում եւ Արցախում: Միայն այս տարուայ սկզբից արդէն գոհուել են 10-ից աւել հայ գինուորներ ու սպաներ՝ պաշտօնական Պաքուի կողմից գինադադարը խախտելու եւ անընդհատ դիւերսիոն գործողութիւններ կատարելու հետեւանքով:

Աւելին, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրները շարունակում են պահպանել յանցաւոր լուծութիւն՝ չնայած տեղի ունեցածին.

1. Դուք ձայն չհանեցիք, երբ Պաքու Ատրպէյճանի ղեկավարութեան անմիջական հրահանգով սպանուեց Տաուշի մարզի քաղաքացիական բնակիչ Կարէն Պետրոսեանը, ով պատահական էր հատել

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԱՄՆ ԳԱՂԹԵԼՈՒ ՅԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՍՈՒՐԻԱՅԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ



Սուրիահայութեան Օժանդակութեան Միացեալ Մարմին (ՍՍՐՖ)ը, գաղութիս ղեկավարութիւնը ստանձնած կազմակերպութիւններու համակարգ մարմինը, կը շարունակէ յանձնառու ըլլալ օգնութեան ձեռք բերելու՝ Սուրիոյ քաղաքացիական պատերազմի պատճառով անկայուն վիճակի մատնուած է այն երկրի հայկական գաղութին, որ դարձեալ շարունակ հայերու երկրորդ հայրենիքը եւ ապահով կայան մը եղած էր ցեղասպանութիւնէ վերապրող հարիւր հազարաւոր մեր հայրենակիցներուն համար:

Վերջին շաբաթներու ընթացքին, կարգ մը յայտարարութիւններ եղած են հանրութեան, թէ Միացեալ Ազգերու Գաղթականներու Գերագոյն Խորհուրդը եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու կառավարութիւնը նախաձեռնած են Սուրիացիներու վերաբնակեցման ծրագիր մը, անհատներու եւ ընտանիքներու օգնելու, որոնք տեղահանուած են երկրի անապահով վիճակի շարունակման հետեւանքով:

Վերոյիշեալ յայտարարութիւնները, որոնք առ այժմ չեն հիմնաւորուած եւ հետեւաբար աննիշտ ձեռքով (տեղափոխուած) կը ներկայացնեն ԱՄՆի կառավարութեան Սուրիացի գաղթականներու երկրէն ներս ընդունելու համար փաստաթուղթերու գործընթացը. որոշ անհատներ սկսած են առաջարկել իրենց «ճառարարութիւնները» ի դիմաց մեծ գումարներու, սկսելու համար ներգաղթի գործողութիւնները, որոնք չեն իսկ որոշուած մոյն իմքն ԱՄՆի կառավարութեան կողմէ:

Հետեւաբար, մենք կը զգուշացնենք հանրութիւնը որ զգուշաւորութեամբ մօտենայ մանօրինակ ճառարարութիւններու դիմելու առաջ:

Սուրիոյ հայ գաղութին ամէնօրեայ պետութեան հասնելու համար հանգանակային արշաւներ կատարելու գատ, ՍՍՐՖը շարունակաբար կը հետեւի ինքնուրոյն գաղթացումներուն եւ կը հանդիպի պատկան մարմիններու հետ ձեռք բերելու համար համապատասխան տեղեկութիւնները Սուրիոյ տեղահանուած ժողովուրդին ներգաղթի ու գաղթականներու իրավիճակի աղբնութեամբ:

Գիտակցելով որ Սուրիահայութիւնը ինչպիսի ծանր պայմաններու մէջ կը գտնուի, մենք հաստատակամ յանձնառութիւնը ստանձնած ենք հասնելու իրենց կարիքներուն:

Վստահ ենք, որ այս հարցերուն մեկտմամբ երբևորութիւններ կը ստանանք, լրատուական միջոցներով զանոնք կը փոխանցենք գաղութի մեր հայրենակիցներուն:

Սուրիահայութեան Օժանդակութեան Միացեալ Գործադիր Մարմին

սահմանը:

2. Դուք ձայն չհանեցիք, երբ ատրպէյճանցի ղեկավարները Քարվա ճառում գերի վերցրին ու գաղանաբար սպանեցին 16-ամեայ պատանի Սմբատ Յակնեանին, գոհուեց մայրը Սարգիս Աբրահամեանը, ծանր վիրաւորուեց քաղաքացի Կարինէ Դաւթեանը:

3. Դուք ձայն չհանեցիք, երբ ատրպէյճանցիները խոցեցին հայկական ուղղակիութիւնը՝ չնայած վերջինս չէր հատել հակամարտութեան սահմանը: Աւելին, դուք կրկին ձայն չհանեցիք, երբ պաշտօնական Պաքուն ոչ մի կ'ընթերցէ Ռոման Մատինեան կերպ թոյլ չէր տալիս Հայրենիք վերադարձնել գոհուած օդաչուների մարմինները, որոնք, ի դէպ, վերադարձուցին եւ հողին յանձնուեցին հայկական ստորաբաժանումների փայլուն գործողութեան արդիւնքում:

4. Դուք շարունակում էք ձայն չհանել, երբ սահմանին գոհուած են երիտասարդներ՝ ընդ որում, աւելի շատ Ատրպէյճանից: Յատուկ չէ, որ եթէ Պաքուի համար կարեւոր չէ, թէ քանի գոհ է տալիս իր իսկ արկածախնդրութեան հետեւանքով, սպա մեզ համար ան գնահատելի է մեր իւրաքանչիւր գինուորի կեանքը:

Պարոնայք, պատերազմի պա-



«Սարգիս Տիրունի» միութիւնեան նամակը կը շարունակէ իր անխնայ օգնութիւնը, որպէսզի հայրենիքը, երբ ատրպէյճանցիները խոցեցին հայկական ուղղակիութիւնը՝ չնայած վերջինս չէր հատել հակամարտութեան սահմանը: Աւելին, դուք կրկին ձայն չհանեցիք, երբ պաշտօնական Պաքուն ոչ մի կ'ընթերցէ Ռոման Մատինեան կերպ թոյլ չէր տալիս Հայրենիք վերադարձնել գոհուած օդաչուների մարմինները, որոնք, ի դէպ, վերադարձուցին եւ հողին յանձնուեցին հայկական ստորաբաժանումների փայլուն գործողութեան արդիւնքում:

Եթէ ոչ՝ հետեւանքների համար հայ ժողովուրդը պատասխանատու չէ»:

ՍԱՐԳԻՍ ԶԱՅՊԱՆԵԱՆ «ԶԱՅԵՐՆ ԻՐԵՆՑ ԲԼՕՐԻԱՆՈՒՄ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ»

Ե՞րբ թուրքերը սկսեցին շարժուել դէպի Հայկական լեռնաշխարհ, ի՞նչ տեղ էին գրաւում հայերն Օսմանեան կայսրութիւնում եւ երբուանի՞ց թուրքերի կողմից ընտիր, հաւատարիմ ազգ համարուող հայերը կայսրութիւնում դարձան անցանկալի տարր, ինչպէ՞ս է ընթացել հայերի թրքացումը կայսրութիւնում ու հանրապետական թուրքիայում, ովքե՞ր են այլեւիներն ու զազանները, ի՞նչ առնչութիւն ունեն հայերի հետ, թէ ինչպէ՞ս հայութիւնը գոյատեւեց Օսմանեան կայսրութեան փլատակների վրայ ստեղծուած հանրապետական թուրքիայի տարածքում, Արեւմտեան Հայաստանում հայերի ինչպիսի՞ ժողովրդագրութիւն է յայտնի եւ ի՞նչ պատահեց իրենց բնակավայրերը չլքած, ցեղասպանութիւնից մազապուրծ հայերի հետ, այս եւ մի շարք այլ հարցերին պատասխանում է հրապարակախօս-վերլուծաբան Սարգիս Հայպանեանը:



Թացքում 1 միլիոնից աւելի հայ է թրքացում: Ենիչերինները 2 կարեւոր դերակատարում են ունեցել՝ նրանք կազմում էին սուլթանի պահակախումբն ամենավատահիշ գունդը եւ պատերազմների ժամանակ առաջնորդում էին զօրքը - Այո՛, կայսրութիւնում սուլթանն իր կեանքը, հարեմն ու ինչքը վատահում էր քրիստոնեաներին: Ի դէպ, ոչ մի սուլթանի մայր թրքուհի չի եղել, մայրերը եղել են բալկանեան երկրներից՝ բուլղար, սերբ, մոլդաւ, խորուաթ, աւստրիացի, հունգար, մակեդոնացի, շատ յոյներ եւ մի քանի հայուհիներ: Յաւօք, հայուհի էր սուլթան Աբդուլ Համիդի մայրը՝ Վերտինէն:

1453թ. Կոստանդնուպոլսի նուաճումից յետոյ, սկսում է Հայկական լեռնաշխարհի նուաճումը, ընդ որում՝ Կիլիկեան Հայաստանն արդէն մաս էր կազմում Օսմանեան կայսրութեան: Մեհմեդ 2-րդի մահից (1481թ.) յետոյ, Հայկական լեռնաշխարհը դեռ մտած չէր կայսրութեան կազմի մէջ (վկայակոչուեց քարտէզը):

1451-1699 թթ. ժամանակաշրջանն առանձնանում է հայերի համար 3 հանգամանքով: Սկսում է հայերի արտագաղթը իրենց բնօրրանից դէպի արեւմուտք՝ Գամիրք, Նիկոմեդիա, Բուխարա, Կոստանդնուպոլիս: Մեհմեդ 2-րդը 1461 թ. Բուրսայի հայ հոգեւորական Յովակիմին բերում է Կոստանդնուպոլիս եւ կարգում պատրիարք: Նոյն թուականին հայկական հոգեւոր աթոռը Վանից տեղափոխուում է Կ.Պոլիս եւ Օսմանեան կայսրութիւնում հայերին վերաբերող բոլոր վարչական գործերը կատարուում են Հայոց պատրիարքի միջոցով ու միջնորդութեամբ, որն

օրինական ուժ է ստանում 1830 թուականին: Այդ ժամանակից սկսած հայութիւնը, որպէս կայսրութեան ազգային հպատակ, ստանում է «հաւատարիմ ազգ» կարգավիճակը:

Հայութեան կեանքում էական, կարեւոր իրադարձութիւն է տեղի ունենում 1514 թուականին, երբ սուլթան Ահմեդ մականուամբ յայտնի Սելիմ Առաջինը (Մեհմեդ 2-րդի թոռը), որը յայտնի էր Եւրոպայում, Օսմանեան կայսրութեան պատմութեան մէջ առաջին անգամ արշաւանք է սկսում դեպի արեւելք, դէպի Հայաստան, Իրան, Արաբական երկրներ: Վանից հիւսիս-արեւելք գտնուող Չալդրան կոչուած տարածքում, որի բնակչութեան գրեթէ 100 %-ը հայեր էին, տեղի է ունենում Օսմանեան կայսրութեան բանակի եւ Իրանի շահ Իսմայիլի զօրքերի առճակատումը: Հայերն ու տարածաշրջանի զազա հատուածը, որ այլեւիցմի հետեւորդներ էին, հանդէս եկան Իրանի շահի կողմից՝ ընդդէմ Օսմանեան կայսրութեան: Դրանից յետոյ Օսմանեան կայսրութիւնը վրէժ լուծելու նպատակով որոշեց բնաջնջել այդ տարածքի հայ քրիստոնեայ հատուածը: Տարբեր աղբիւրներ նշում են, որ 1545-ից մինչեւ 1650 կամ 1667 թուականները շուրջ 120 հազար հայ է կրօնափոխ եղել: 1545-ից մինչեւ 1700 թուականները կայսրութիւնում տեղի է ունեցել Չալալեան 5 ապստամբութիւն: Դրանք լուրջ դերակատարում ունեցան հասարակական կեանքում եւ ընդգրկում էին հաւատամքի, դաւանանքի, սոցիալական եւ այլ հարցեր: Ինչ էլ կատարուում էր, վերջում ջարդուում էր հայերի գլխին եւ հայերը

ստիպուած դաւանափոխ էին լինում կամ էլ արտագաղթում իրենց բնակավայրերից: Այդ ժամանակաշրջանի 150-190 տարիների ընթացքում դաւանափոխ հայերը դարձան ալեւի, նրանք չդարձան սուննի, հանեֆի, շաֆի: Իսլամում կայ շիիզմի ծայրայեղական աղանդ համարուող ալեւիզմ, որը մեր հեթանոսութեան, քրիստոնէութեան եւ իսլամի խառնուրդ է: Հայութեան ալեւի դարձած հատուածը տարածաշրջանում միակն է, որի խնդիրները չեն լուծուել: Ինչո՞ւ հայը նախընտրեց դառնալ ալեւի: Պարզուում է, որ հայոց թէ՛ հեթանոս եւ թէ՛ քրիստոնէական ժամանակաշրջանի՝ պաւլիկեան ու թոնդրակեան շարժման մշակութային արժէքներն ապրում են այլեւիզմի մէջ, վերջինս հարազատ է հայերին, այն ամենամարդկային կրօնն է հայերի հանդէպ, քանզի իր ազգութիւնից դուրս մարդկանց նկատմամբ ատելութիւն չի սերմանում:

Մեր հոգեւոր դասը՝ եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանայ՝ տէր-հայրերը ընդունելով ալեւիզմը՝ դրզըլբաշութիւնը, դարձել են նրանց սեյիդները (առաջնորդ), փիւրերը (Սրբազան առաջնորդ), փիւրանփիւրերը (Սրբազանագոյն առաջնորդ): Ալեւիների մէջ կան 4 տարբեր ժառանգաբար փոխանցուող աշերիթներ (տոհմեր), որոնք մեծամասամբ էթնիկ հայեր են: Նրանք հիմնականում բնակուում են Դերսիմում, Երզնկայում, Սեբաստիայում, Բինգիլում, Ադիամանում, Խարբերդում եւ կազմում են մօտ մի քանի հարիւր հազար մարդ, նրանց մասին, ցաւօք, ճշգրիտ որեւէ տուեալ չկայ: Այսօր Եւրոպայում ապրող շատ ալեւիներ պրպտում են իրենց պատմութիւնը, փորձում են գտնել իրենց իսկական ինքնութիւնը եւ ասում են, որ իրենց նախնիները հայեր են եղել: Հետազօտող երիտասարդների մէջ շատ-շատ են յատկապէս դերսիմցի, մարաշցի, բինգիլցի, սեբաստացի, խարբերդցիները: Զազա ժողովրդի մէջ կայ մի հատուած, որոնք ասում են, որ իրենց տոհմերի նախնիները ժամանակին հայեր են եղել: Մամեքաններն, օրինակ, ասում են, որ իրենք Մամիկոնեաններից են սերուել, Խորմեքանները գտնում են, որ իրենք Խորխոռունիների տոհմից են, այդպիսիներից են Ալանները, Իզրիները, Դեմենաները եւ այլն, նրանք շատ-շատ են, մօտ 126 տոհմի մասին է խօսքը

Շար.ը էջ 20

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---

A.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաճելի է

Coverage & Protection should be on the top of your priority list.

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

ԳԱՅՈՒՇ ԶԱԼԸՔՄԱՆ-ԿԱԻՐԻՆՈՅ.«ԹՈՒՐԵՐԸ ՊԷՏՔ Է ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՍՕԹԸ ՄԱՔՐԵՆ»



ՄԱԳՕ ԱՐԵԱՆ

Գայուշ Զալըքման-Կալրիլոֆը Պոլիս ապրող հայ կին քաղաքական գործիչ է: Ան թուրքիոյ քաղաքական կեանքին սկսած է մասնակցել նախ անդամակցելով Խաղաղութիւն եւ Ժողովրդավարութիւն կուսակցութեան (Baris ve Demokrasi Partisi), որուն հետ բաւական երկար ճամբայ կտրած է: Գայուշ Զալըքման ներկայիս մաս կը կազմէ քրտամէտ HDP (Halkların Demokratik Partisi) կուսակցութեան, որուն միացած են քիւրտեր, յոյներ, ալեւիններ, ասորիներ եւ հայեր: Վերջերս կուսակցութեան շարքերը համալրուած են աշխատատեղի տարբեր սեփականներու անդամներով, քրտական փոքր խմբակցութիւններով եւ հայկական «Նոր Զարթօնք» կազմակերպութեամբ: Զալըքման կ'ըսէ, որ կուսակցութիւնը ներկայիս կը ղեկավարուի թիւրքմէն առաջնորդով մը, որ իր ըսելով հայասէր անձնատուութիւն է: Անոր հետ կատարուած այս հարցազրոյցը Հրանդի Տինքի նահատակութեան 8-րդ տարեկիցին ընդառաջ: Կարելի է ըսել, որ հարցազրոյցին միջոցաւ կարելի եղաւ արծարծարել այսօր Պոլիս ապրող հայ հասարակութեան հիմնական օրակարգերը եւ Հայոց Յեղասպանութեան 100ամեակէն ամիսներ առաջ այնտեղ տիրող ընդհանուր մթնոլորտը:

- Հրանդի նահատակութիւնէն անցած են 8 տարիներ: Հրանդի սպանութիւնը բեկումնային եղաւ թուրքիոյ հասարակութեան համար: Ի՞նչ իրավիճակ կը տիրէ այսօր թուրքիոյ մէջ:

- Եթէ հարցը թուրքիոյ ընդհանուր վիճակի հետ կապուած է, կրնանք ըսել թէ պետական մաշտաբով կատարուած գողութիւնները, ոճրագործութիւնները, մէկ խօսքով բոլոր օրինազանց եղելութիւնները դարձեալ պետական օժանդակ կը լուսացուին, կը մաքրուին, իսկ ասդին Հրանդ Տինքի սպանողը 8 տարիէ ի վեր կը մնայ նոյն կէտին վրայ, ի բաց առեալ առնուած փոքր քայլերէ այն մտադրութիւնով, որ կարելի կ'ըլլայ ժողովուրդը միջոցի մը համար զբաղեցնել: Այս իրավիճակը միայն Հրանդ Տինքի սպանութեան համար ի գորու չէ՛, այլ թուրք ժողովուրդին համար ալ յաճախ փորձուած, ծանօթ իրողութիւն մը: Անլոյծ սպանուներով լեցուն է պետութեան արդարութեան տետրը: Երէկ օրինակ հարելուոր մայրեր, կիներ, քոյրեր 512-րդ անգամ ըլլալով Կալաթասարայի մայթերու վրայ արդարութիւն փնտռեցին: Անոնք

անյայտ ձեւով կորսնցուցած են իրենց ամուսինները, զաւակները եւ կամ եղբայրները: Անոնք երկու բան կ'ուզեն, նախ իրենց հարգատներուն դիակները գտնել եւ յետոյ ոճրագործները բացալատել: Այս երկրին մէջ տասնեակներով լրագրողներ, մտաւորականներ, քաղաքական գործիչներ զոհ գացած են եւ սպանուներուն ոճրագործը մնացած է անյայտ: Հրանդ Տինքի ցաւը դեռ շատ տաք էր, երբ Սեւակ Պալըքմին զոհ տուինք: Ի՞նչ ըրաւ պետութիւնը. ոչինչ: Սամաթիոյ մէջ հայ կիներ հալածուեցան, Մարիճա Քիւլիւքը սպանուեցաւ, Ի՞նչ ըրին: Դարձեալ ոչինչ: Կարծես մեր քթին խնդալով խեղճ հայ մը ոճրագործ «սարքեցին»: Ինչ որ ըսենք ի գուր է, այս բոլորը իրերայաջողող ղէպքեր են: Եթէ մէկը լուծուէր, ոճրագործները գտնուէին, միւսներն ալ կը լուծուէին: Թուրքիա իր քաղաքականութիւնը կայացուցեր է ուրացում մի եւ ժխտումի հիմերու վրայ: Այս իրավիճակը ճիշդ այդ քաղաքականութեան հետեւանքն է եւ անշուշտ արմատ առած է Օսմանեան Կայսրութեան ժամանակ կատարուած ցեղասպանութիւններուն վրայ:

- Հրանդի սպանութեան գործի ամբողջական բացայայտումը տակաւին չէ կատարուած: Այդ գործին առընթեր երեւելի դարձած անունները արդեօք իրական պատուիրատուներն են: Եթէ չեն, ապա թուրքիոյ իշխանութիւնները ինչքանով անկեղծ են գործին ամբողջական օժանդակութիւնը բացայայտելուն առընթեր: Մասնաւոր, որ ամէն հանգրուանի նոր անուններու եւ ձեռքարկումներու մասին ակամատես կ'ըլլանք:

- Իմ կարծիքով այդ անունները անշուշտ գործին մէջն էին, բայց բնականաբար չենք կրնար ըսել թէ բուն պատուիրատուներն են, քանի որ արդէն գիտենք ով է բուն հրամանատուն: Իշխանութիւնը իրեն պէտք եղած չափով եւ ժամանակամիջոցի մէջ օգտագործեց զիրենք, հիմա կ'երեւի այլեւս պիտանի չեն, որ կրցաւ անոնց անունը յայտարարել: Անշուշտ ներկայ պայմաններուն պէտք է զանց առնել Զիլքէի (Սուրիոյ հետ սահմանային շրջանին մօտ գտնուող թրքական քաղաք) ղէպքերու ազդեցութիւնը յատկապէս էրճան Տէմիրի անուան յայտ նաբերման շուրջ: Իսկ ո՞վ է էրճան Տէմիրը:

- Ան Տինքի սպանութեան օրերուն կը պաշտօնավարէր Տրապիզոնի մէջ, իսկ ներկայիս Պոթամ նահանգի Զիլքէ քաղաքի ոստիկանապետն է: Իր պաշտօնը ստանձնելի վեր այդ շրջանին մէջ 6 երեխայ

սպանուեցաւ: Եթէ Հրանդ այսօր ողջ ըլլար, ի՞նչ պիտի ըլլար անոր ամէնէն կարելոր օրակարգը:

- Այս հարցումին կարելի չէ պատասխանել: Յանդանութիւն կը նկատեմ մէկու մը ընելիքներուն, խօսելիքներուն մասին (երեւակայական) կարծիք յայտնելը, մասնաւոր որ ինքը չկայ եւ հերքելը անկարելի է: Կան մարդիկ, որոնք շատ կը սիրեն ամէն ինչի մասին կարծիք յայտնել ակնարկելով՝ Հրանդ Տինքին: Մարդոց մտածելակերպը տարուէ տարի կրնայ փոխուիլ, եթէ նոյնիսկ շատ մօտ ես տուեալ անձի մը, չեն կրնար գիտնալ թէ այսինչ նիւթին մասին ինչպէ՞ս կրնար ըլլալ անոր դիրքորոշումը: Կրնամ ըսել միայն, թէ ինք անտարբեր պիտի չմնար ցեղասպանութեան հարիւրամեակի ընդհանուր մթնոլորտէն:

- Սինչեւ այս պահը Հրանդ ամբողջութեամբ չէ հասկցուած եւ սփիւռքի եւ Հայաստանի մէջ: Հրանդ կը խօսէր թուրքիւն հանդէպ առկայ ատելութիւնը մէկ կողմ դնելու եւ հայ-թուրք խնդիրներու տարբեր հայեացքով մայելու մասին: Հայեացք մը, ուր անցեալը չմոռնալով եւ չուրանալով հանդերձ նոր մղում պիտի տար իր ձեւակերպմամբ «Երկու մօտ ժողովուրդ-երկու հեռու հարեւան» ժողովուրդներուն: Ի՞նչ կը մտածէք այս առումով:

- Այո, այս ձեւը ակնարկածը ամէնէն յատկանշական կողմն էր իր մտածելակերպին: Իսկապէս ալ այս երկու ժողովուրդները բաւականին մօտ են իրարու, բայց այս իրականութեան տեղեակ չեն, որովհետեւ զիրար չեն ճանչնար: Թուրքերը արդէն նպատակ ալ չունին ճանչնալու եւ անշուշտ հաշտուելու: Հարիւրաւոր տարիներու ընթացքին պետական քաղաքականութիւնը մեծապէս օժանդակած է այս իրողութեան: Ես բացարձակապէս չեմ հաւատար, որ այս երկու ժողովուրդները կը հաշտուին: Հաշտութեան պայմանները չեն գոյացած եւ պիտի չգոյանան: Մանա-

ւանդ այս իշխանութիւններուն հետ, որոնք դարերու ընթացքին իրենց գոյութիւնը պահպանած քաղաքական մտայնութեան մը հետեւորդներն են:

- Ցեղասպանութեան 100-ամեակին ընդառաջ կարծեք հայ եւ թուրք «երկխօսութիւնը» միայն կեդրոնացած է նախագահներ՝ Սերժ Սարգսեանի եւ Ռեժեպ Թայյէպրոդանի միջեւ եղած եւ հրապարակուած մամուլագրութեամբ: Ատկէ դուրս Սփիւռքի (որպէս իրաւատէր արեւմտահայութիւն) եւ Հայաստանի քաղաքացիներուն կողմէ, որեւէ բացայայտ կամ ընթացքներուն նոր մղում տուող «երկխօսութիւն» չկայ: Ձեր կարծիքով ինչքանով օգտակար է այս «լուրեւան պատիւն» առկայութիւնը եւ ի՞նչ կը մտածէ թուրքիոյ հասարակութեան այն հատուածը, որ քիչ թէ շատ կը հասկնայ Հայաստան-թուրքիա յարաբերութիւններուն առջեւ ծառայած դժուարութիւններուն խորութիւնը:

- Անշուշտ այս նիւթերու շուրջ խօսելու ժամանակ պէտք է միջպետական խաւերը առանձնացնել, բայց ներկայ պայմաններով, լաւ է որ սա կամ նա ձեւով երկու երկիրներու բարձրագոյն աթոռներու միջեւ երկխօսութիւն կայ: Եթէ ձեռք ձգենք երկու երկիրներու ժողովուրդային խաւը, կրնանք ըսել թէ ոչ պետական կազմակերպութիւններու կամ անհատական ջանքերու շնորհիւ այս նիւթին շուրջ աշխատութիւններ գոյութիւն ունին, որոնց յաճախ մասնակից են Սփիւռքի հայերը: Ինչ կը վերաբերի թուրք հաւաքականութեան, կրնամ ըսել, թէ այս նիւթին շուրջ մարդկային մօտեցում ցուցաբերող, արդարութեան պահանջը զգացող զանգուածին համեմատութիւնը 10 առ հարիւր անգամ չէ: Այս տոկոսը ցաւալի քանակ մըն է 70 միլիոնից երկրի մը մէջ: Ի՞նչ երկխօսութեան մասին կը խօսուի, երբ երկրի ժողովուրդին մեծա-մաս-

Շաբ.բ էջ 18

Շնորհակալութեամբ ստացանք լիբանանայ գրող Արամ Սեփեթեանի «Ձայներ Լուրթեան մէջ» հատորը, որ իր մէջ կ'ամփոփէ ազգային գաղափարախօսական բնոյթով ժամանակայուց յօդուածներու շարք մը, որ հեղինակին բառերով, իբրեւ խաչբուռ՝ կը ներկայացնէ Հայոց Յեղասպանութեան Հարիւրամեակի անկշռելի տարելիցի առիթով:

Չորս ենթաբաժիններու բաժնուած՝ Ա. ԱՊՐԻԼԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ, Բ. ՁԱՅՆԵՐ ԼՈՒՌԹԵԱՆ ՄԷՁ, Գ. ԳԻՐ ԵՒ ԺԱՆԱՊԱՐՀ, Ե. Դ. ՊԱՀԵՐ ՈՒ ԽՈՂԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ, այս 285 էջերէ բաղկացող գեղատիպ հատորը լոյս կ'ընծայուի մեկենասութեամբ՝ Տոքթ. Շահէ եւ Հուրի Փարթամեան գոյգին եւ հեղինակը կը ձօնէ իր թոռնուհիներուն՝ Լորի եւ Փաթիլ Հ. Սեփեթեաններուն եւ թոռներուն՝ Հրակ եւ Արման Շ. Փարթամեաններուն ու իրենց հասակակից սերունդին: Ձայներ Լուրթեան մէջ հատորի մէջ ամփոփուած են 1977-2013 թ. «Ձարթօն» օրաթերթի «Պայքար» շաբաթաթերթի, եւ «խօսնակ» ամսաթերթի էջերուն մէջ հեղինակին՝ Արամ Սեփեթեանի ստորագրած յօդուածները, որոնք հետաքրքրութեամբ կրնան կարդացուիլ:

ԱՊՐԻԼԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ առաջին ենթաբաժնումը կը բաղկանայ տասներօթ յօդուածներէ, որոնք, ընդհանրապէս նուիրուած են Հայոց Յեղասպանութեան տարելիցներուն, ուր ընդհանրապէս տիրող պատգամն է ազգային միասնութեան լոգունքի ներքեւ՝ «պատրաստ ըլլալ դիմակալելու ամէն մարտահրաւէր ու զոհողութիւն, յանուն մեր անժամանցելի դատին եւ ապագայի յաղթանակին»:

ՁԱՅՆԵՐ ԼՈՒՌԹԵԱՆ բաժինը կ'ընդգրկէ ութ յօդուածներ, որոնք ընդհարապէս կ'անդրադառնան Ամանորի, հայ եկեցւոյ, հայ ժողովուրդի հոգեւոր սլաքներու



զարգացման, անոր մտածողութեան դաշտի ընդլայնման եւ վաղուան հայը պատրաստելու կոչուած հրամայականին վրայ, ուր «մեծ դեր են խաղալու վերստին արթնութիւնը քուն մտած համաշխարհային միտքն ու խիղճին», յանուն հայ ժողովուրդի արժանապատուութեան յարգանքին եւ վերապրելու իրաւունքին:

ԳԻՐ ԵՒ ԺԱՆԱՊԱՐՀ գլուխը կը բովանդակէ 34 խոհական յօդուածներ, որոնք հիմնականին մէջ կ'անդրադառնան «հայ գրքի», «հայ մամուլի», «հայ մշակոյթի», մեր ազգային հիմք՝ «հայ ընտանիքի», եւ «մէկ հայրենիք, մէկ ժողովուրդ, մէկ եկեղեցի» նշանաբանի վրայ: Հեղինակը իր խոհերը կ'արժեւորէ եզրափակիչ կարգախօսներով, որոնք սթափութեան կ'առաջնորդեն ուշադիր ընթերցողը:

ՊԱՀԵՐ ՈՒ ԽՈՂԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ իր չորրորդ բաժինով Սեփեթեան կ'ամփոփէ իր հատորը Հայաստան տուած իր այցելութեան Հայրենական Օրագրութեամբ, ուր կ'ունենայ զգացական ու խոհական գեղումներ:

Գնահատելի հրատարակութիւն մը, որ արժէ շնորհաւորել Հեղինակը:

ՈՉ ԵՄՍ Է ԳՐՈՂ՝ ՁԱՆԻԲԵԿ ՁԱՆԻԲԵԿԵԱՆ

Խոր ցաւով տեղեկացանք տաղանդաւոր արձակագիր Ձանիբեկ Ձանիբեկեանի (Կոչեցի) ցաւալի մահը Յունուարի 20ին: Տեսակցութիւնը կատարուեցաւ Յունուարի 25ի երեկոյեան, իսկ թաղումը՝ Յունուարի 26ին հոծ թիւով յուղարկուողներու ներկայութեամբ:

Բարձրօրէն գնահատուեցաւ անոր գրականութիւնը եւ անհատականութիւնը արտայայտուողներու կողմէ:

Ձանիբեկ Ձանիբեկեանը շուրջ 20 գրքերու հեղինակ էր, ան Հայաստանի Գրողներու եւ Գալիֆօրնիայի Հայ Գրողներու Միութիւններու անդամ էր: Մեր խորին ցաւակցութիւնները իր ընտանեկան պարագաներուն եւ հարազատներուն:

**OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA**

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Դետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻ

ՀԱՅԿՆԱԳԳԱՇԵԱՆ

Մեր չեղափոխականները ըլ- լան Հնչակեան կամ Դաշնակցական, իրենց պահանջներն մէջ շատ ժուժ- կալ եղած են, ամենէն ժողովրդա- կան երգերէն մէկը կ'ըսէ. «Քանի որ Սուլթանն չունի զթուրքին, ու- ժով պիտի առնենք ինքնավարու- թիւն»: Հազարաւոր տարիներէ ի վեր իր հայրենիքին մէջ ապրող ժողովուրդին այս ժուժկալ պա- հանջն իսկ պատրուակ գործածե- լով թուրք կառավարութիւնը գոր- ծադրեց մարդկութեան մեծագոյն ոճիրը՝ հայ ժողովուրդի ցեղասպա- նութիւնը՝ ոճիր մը որուն հետ զիշատիչ գազաններն իսկ նաեւ կրնար մրցիլ, քանի որ ամենէն սարսափե- լի գազանն իսկ կը սպաննէ մէկ գոհ՝ իր ստամոքսի պահանջը գոհաց- նելու համար, մինչ թուրքը անյա- գորէն բնաջնջեց ներկայիս թուրք- իա կոչուող երկրին աւելի քան երեք միլիոն հայութիւնը, յայտա- րարելով թէ «չկայ հայութիւն, ուրեմն չկայ նաեւ հայկական հարց»:

Ըստ ներքին գործոց նախա- րար Թալաթին 974000 հայեր բնաջնջուեցան եւ աւելի քան եր- կու ու կէս միլիոն աքսորի ճամբա- ներու վրայ փճացան: Հակառակ որ մարդկային պատմութեան անգե- րագանցելի այս ոճիրէն ի վեր հարիւրամեակ մը անցեր է, բայց ոճրագործը չէ պատժուած, ստիպե- լով հայ ժողովուրդը որ Սփիւռքի մէջ որեւէ տեղ փոխադարձելու իրաւունքը վերապահէ հրէշային այս ոճիրին զլրատու պատասխա- նատու «Թալաթ փաշան փախաւ Պերլին, Թեհրանը հասաւ ետին, զարկաւ ճակտին, փռեց գետին, բայց գերման դատաւորը ազատ արձակեց Թեհրանին»:

Ցեղասպանական այս ոճիրին մասին համաշխարհային վկայու- թիւններէն յիշենք մէկ հատը.

«Փամբուշտ ինայելու համար հայ երախաները պարկերու մէջ լեցնե- լով ծով կը թափէին» կը վկայէ «H'Osie Francaise» Յունուար-Ապ- րիլ 1918 համարով: Տանք նաեւ թուրքի մը վկայութիւնը. Պէջրու- թէն Փարիզ ինքնաշարժով ճամ- բորդութեան ընթացքին Ատանա հասնելով, ծերուկ նպարավաճառի մը խանութէն գնում ընելու համար կեցցայ եւ վարժ թրքերէնով հար- ցուցի, թէ հայեր կ'ան այստեղ: Թուրքը ապշած կերպարանքով երե- սիս նայելով ըսաւ. «տղաս դուն շատ պզտիկ էիր այդ օրերուն, ժամանակին շատ կային, արմատէն մաքրեցինք» թուրքը ոչ միայն չէր զղջացած, այլ նաեւ հպարտ էր գործած ոճիրին համար:

Այս կացութեան մէջ զարմա- նալի չէ որ Ասալան կազմուեցաւ (Հայաստանի Ազատագրութեան Գաղտնի Բանակ), որ իր տասնամե- եայ գործունէութեան ընթացքին շուրջ յիսնեակ մը թուրք դիւանա- գէտներ սպաննեց, ամէն մէկին առի- թով աշխարհի լրատու միջոցները մղելով անդրադառնալու որ թուր- քին կատարած ցեղասպանութեան հաշուեյարդարն է եղածը: Ներկա- յիս միլիթարական է նկատել որ կը բազմանան ցեղասպանութիւնը ճա- նաչցողները, բացառութեամբ Մ. Նահանգներու, որուն նախագահ՝ Պարաք Օպաման, մոռնալով ցե- դասպանութիւնը ճանչցող իր նախ- կին տեսակէտը, այժմ կը գոհնայ «Մեծ Եղեռն» որակելով գայն, իր զինակից թուրքիան չվշտացնելու փափկանկատութեամբ, մինչ Ֆրանս- սացի նախագահ Նոլանտ կ'ըսէ. «Այս ողբերգութիւնը ունի մէկ անուն՝ Ցեղասպանութիւն»:

1973 Յունուար 27ին Գուրգէն Եանիկեանով սկսած վրէժխնդրա- կան շարժումէն յառաջ բերած ԱՍԱԼԱ-ի հաշուեյարդարի գոր- ծունէութիւնները թուրքիան մղե-

ցին հայոց հետ երկխօսութեան, որ տեղի ունեցաւ 27 Նոյեմբեր 1977ին, Յիւրիխի մէջ, հայ երեք կուսակ- ցութիւններու ներկայացուցիչնե- րուն եւ թուրք արտաքին գործոց նախարար Սապրի Չաղլայանիէլի միջեւ, որ ցաւ յայտնեց «1915ի դէպքերուն համար, երբ թուրքեր եւ հայեր իրար սպաննեցին», ըն- դունելով սակայն որ Հայոց ինքնա- պաշտպանութիւնը անհատական կամ խմբակային էր, մինչ թրքա- կանը պետականօրէն կազմակերպ- ուած էր իր մականունէն եան վերջաւորութիւնը իբր ապացոյց տալով, ըսաւ որ իրեն հայկական ծագում կը վերագրուի եւ օգտուե- լով «Հայասիրութեան» վերջ տանք Ցեղասպանութեան պնդումին, ան- սահմանափակ գումար առաջարկե- լով իբրեւ հատուցում, բայց շեշտե- լով որ ոչ մէկ թուրք կառավարու- թիւն հողային զիջում կը կատարէ:

Ցեղասպանութեան համամարդ- կային ճանաչման մէջ մեծ դեր ունեցած Ամենայն Հայոց Վազգէն Հայրապետը մեր մեծ ցաւէն մասնա- կից դարձնելով կաթողիկէներու կեդ- րոն Վատիկանը, Ռուս Ուղղափառ, Անկլիքան, Աւետարանական, Ասորի եւ Ղպտի եկեղեցիները: Մեծ դեր կատարեցին նաեւ Հայաստանի քա- դաքագէտներն ու պետութիւնը, որուն որոշումով կառուցուեցան Սարգա- պարատի եւ Միծեռնակաբերդի Յու- շակոթոցները:

Պէտք է շեշտել որ Ցեղասպա- նութեան համաշխարհային ճանաչ- ման պայքարին մէջ մեծ դեր ունեցաւ նաեւ Սթրազպուրկի եւ- ռոպական խորհրդարանը, որ իր որոշումը յայտնեց 1986 Յուլիս 18ին:

Մեծ գոհունակութեամբ իմա- ցանք նաեւ որ 2015 Ապրիլ 24ի նախորդեակին Վատիկան ցեղաս- պանութեան մասին փաստաթուղ- թեր պիտի հրատարակէ եւ պապը յատուկ պատարագ պիտի մատու- ցանէ գոհներու յիշատակին:

Եկեղեցիներն ու համաշխար- հային խորհուրդը եւս (Ե.Հ.Խ.) որո- շած է ցեղասպանութեան 100րդ տարելիցին յիշատակութեան մաս- նակցիլ, յիշելով 1979ին Մ.Ա.Կ.ի Մարդկային Իրաւանց Յանձնախում- բին կողմէ այս հարցին արծարծումը եւ թելադրելով:

1) 2015 Ապրիլ 24ի մօտ թուա- կանի մը ժրնեւի մէջ կազմակերպել միջազգային համագումար՝ ցեղաս- պանութեան ճանաչման ու հատուց- ման համար, մասնակցութեամբ մի- ջազգային օրէնքի մասնագէտներու:

2) Այդ նպատակին համար ժրնեւի Մայր Տաճարին մէջ կազմա- կերպել կրօնական արարողութիւն:

3) Կոչ ուղղել Ե.Հ. Խորհուրդի անդամ եկեղեցիներուն ոգեկոչելու ցեղասպանութեան նահատակներու յիշատակը, համամարդկային մա- կարդակով:

Այս առթիւ Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսի հրահրով Ս. Էջմիածին համախմբուած են Կիլիկեան Աթոռի Արամ Ա. կաթողի- կոսի եւ 61 Արքեպիսկոպոսներ ու եպիսկոպոսներ, որոնք ցեղասպանու- թեան նահատակներուն սրբադաս- ման արարողութիւնը որոշած են կատարել 23 Ապրիլին, կոչ ուղղելով միջազգային հանրութեան վճռակա- նօրէն շարունակել թուրքիոյ կողմէ հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման գործընթացը:

Վերջացնելէ առաջ հայ ժողո- վուրդին ուշադրութեան կը յանձ- նեմ որ Ցեղասպանութեան յիսնամե- ակին առթիւ Պոլսի Պոլիտեխնիկ ոգեկոչ- ման ներկայ էին շուրջ 85000 հայորդիներ, պետութեան ներկա- յացուցիչներ եւ եղբայր արաբ ժողովուրդի բազմութիւն մը: Ակն- կալելի է որ 100 ամեակին առթիւ կրկնապատկուի այդ թիւը եւ Նիւ- րէնպերկի նոր դատարանով մը պատժուի ոճրագործը: Այլապէս սփիւռքահայութիւնը իր իրաւուն- քը կը նկատէ պատժել ոճրագործը աշխարհի որեւէ անկիւնին մէջ:

AGBU ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
 ՀԱՅԿԱԿԱՆ ԳՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐՆԱԿԱՆ ԻՄՈՒՅՈՒՄ

ՄԱՆՈՒԹԱԳԻՐ
 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան («Միութեան») Կեդրոնական Վարչական Ժողովը այսու կը ծանուցանէ Միութեան բարձր իրաւաստ անդամներուն թէ Միութեան 88-րդ Ընդհանուր Ժողովը պիտի գումարայի Եւրոպ 4 Ապրիլ 2015-ի առաւօտեան ժամը 11-ին, Երեւանի Մատենադարանի (Մեսրոպ Մաշտոցի անունի ին ձեռագիրներու գիտահետազոտական ինստիտուտ) դահլիճին մէջ:

88-րդ Ընդհանուր Ժողովի գումարման վերաբերեալ միակ ծանուցագիրն է այս: Զեւեւաբար, Միութեան իրաւաստ անդամներն կը խնդրուի որ վերոնշեալ քուակազմին անձնապէս ներկայ գտնուին ժողովին համար նշուած փայրը, կամ յիշեց փոխանորդաբերը՝ նիմանական կանոնագրի սրբապատճառեան համաձայն գործադրուած եւ վաւերացուած, ազդեցկէն կամ լանձնէն Կեդրոնական Վարչական Ժողովի անկողնային, ամենաուշ փնչել 4 Մարտ 2015, կեդրոնական գրասենեակի նետեալ շաստով:

Armenian General Benevolent Union
 Central Board of Directors
 55 East 59th Street
 New York, NY 10022-1112, U.S.A.

ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳ

1. Կատարում եւ վաւերացում Միութեան 2012 եւ 2013 տարեշրջաններու ընդհանուր գործունէութեան տեղեկագրին:
2. Կատարում եւ վաւերացում Միութեան 2012 եւ 2013 տարեշրջաններու հաշուական տեղեկագրին:
3. Ընդգրպիւն Կեդրոնական Վարչական Ժողովի անդամներու:
4. Ընդգրպիւն Զարուհեանի Յանձնախումբի միջ անդամը:
5. Քննարկում վերոնշեալ օրակարգըուն առկուող որեւէ հարցի, ինչպէս նաեւ ժողովի աշխատանքներուն ընթացքին արծարծում կամ բաւ պատշաճի ժողովին ներկայացում հարցերու, ներառեալ կանոնագրի բարեփոխումներ:
6. Քննարկում Ընդհանուր Ժողովի յանձնարարութիւններու եւ բանաձեւերու:

Ի Դիմաց
 Ը.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵՂՈՂԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՐ

Պէրճ Փափազեան
 Ատենադպիր

Պէրճ Սեղբակեան
 Լախագահ

21 Յունուար 2015

CENTRAL BOARD OF DIRECTORS:
 PRESIDENT - EDGE SETRAKIAN; VICE PRESIDENTS - SAM SHOKHIS, SENAS SINAJIAN; TREASURER - SERGIY DOROSHIN; SECRETARY - HEIKE PAPADIS
 HONORARY MEMBER - HENRIK KHACHATRIAN, Co-Chairman of All Armenians
 MEMBERS - United States: NCI BAR AFESIAN, M. MICHAEL ANSOBU, CAROL BAGDASARIAN ALAPIAN, JONATHAN BAKALIAN, NAJABETH PENTIKSIAN, JETTA WAKEN SACOURTIAN, SARIS JEREGIAN, LEVON NAZARIAN, DECKEN TORGIAN, SERGIY ZORIAN, ANTONIA KIRAN KEO BOHIAN, FRANCES ANN KHAMAN, SERGIYAN TRIF GARRACHE, JAMES WAKEN SACOURTIAN, Hannel Angelina, JONATHAN GIBBOULIAN
 COUNCIL OF HONORARY - SARIS DOROSHIN, RICHARD MANOOGIAN, NAZAR NAZARIAN, LOUISE MANOOGIAN SIMONE, KARISS TROCIAN
 IN MEMORIAM - DECKEN SACOURTIAN, FRANCES ANN KHAMAN, SERGIYAN TRIF GARRACHE

California State University, Northridge
 The Armenian Studies Program
 Presents a Conference As Part of the United Armenian Council of Los Angeles'
 Armenian Genocide Centennial Commemorative Events

THE ARMENIAN GENOCIDE: ACCOUNTING AND ACCOUNTABILITY
 Saturday, January 31, 2015, 9:30 a.m. – 4:30 p.m., the Grand Salon, CSUN

PANELS:

- *LANGUAGE AS A VICTIM
- *TEACHING GENOCIDE
- *THOSE WHO WERE FORCED TO ASSIMILATE
- *LEGAL RESPONSES TO GENOCIDE-RELATED LIABILITIES

Co-Sponsors

- *United Armenian Council of Los Angeles
- *National Association for Armenian Studies and Research (NAASR)
- *Knights of Vartan – Los Angeles County Chapters
- *Armenian Bar Association
- *Armenian General Benevolent Union
- *Department of Modern and Classical Languages and Literatures, CSUN
- *Mousa Ler Association of California

&

An exhibit of Near East Relief posters by the Ararat-Eskijian Museum, Mission Hills, CA

Parking Lot G3 on Prairie Street at Zelzah Avenue (near Nordhoff Street), Northridge
 Parking tickets (\$6:00 each) may be purchased at the booth or via machines

For further information, you may contact Prof. Vahram Shemmassian at Vahram.shemmassiancsun.edu or (818) 677-3456

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ



ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ

ՆԱԽԱՃԱՇ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՅԻՆ ՀԵՏ

Դեկտեմբեր ամիսը իր սուսական զգեստով ամէն տեղ է, նաեւ Հայ Քոյրերու Վարժարանէն ներս, դասարանները անցքերը եւ սրահը զարդարուած են ծառերով եւ մանուկ Յիսուսի ծնունդը յատկանշող նկարներով եւ մսուրով, այս բոլորէն զատ մանուկներու խանդավառութիւնը բազմապատկուեցաւ Շաբաթ Դեկտեմբեր 13-ին երբ անոնք իրենց ծնողներուն եւ դասընկերներուն հետ ունեցան նախաճաշ մը Կաղանդ Պապային հետ, որու ընթացքին 6-7-8-րդ դասարաններէն խառն խումբ մը նեկայացուց, մանկական շատ սիրուած թատրոնը, որուն յաջորդեց բազմաթիւ գուարճալի խաղեր եւ ամենահաճելի՝ ձիւնախաղն էր ուր ոչ միայն փոքրեր այլ մեծահասակներ, ծնողներ իրենց երազած ձիւնի փաթիլներու տակ գուարճացան եւ հրճուանքի պահեր ապրեցան: Հաճելի էր նաեւ ծննդեան երգեցողութիւնը, որ վարժարանի շրջափակին մէջ տեղադրուած հսկայ ծառին շուրջ, իրենց պատմական տարազներով ներկաները փոխադրեցին Յիսուս Մանուկի ծննդավայրը եւ աւետեցին աշխարհի փրկչին գալուստը, որմէ ետք աշակերտները իրենց լուսանկարները կրող շրջանակները կախեցին ծառին վրայ եւ լուսաւորեցին Հայ Քոյրերու Վարժարանի մեծ ընտանիքի 2015-ի Ծննդեան ծառը:

Ազդեցիկ եւ միաժամանակ իմաստալից էր պահն երբ ամէն ոք երջանիկ եւ նոր տարուան բարեբաստիկ յոյսերով գիրար կը շնորհաւորէր:

Այս բոլորը այս տարի նորութիւն էր եւ շնորհակալ եւ համերաշխ ջանքերովն ու աշխատանքովն էր Տիկնանց Յանձնախումբի ազնիւ տիկիներուն հովանաւորութեամբ եւ զօրակցութեամբ Տնօրէնութեան եւ խորհրդատու մարմնի Յարգելի Անդամներուն:

Վարձքերնիդ կատար սիրելի ծնողներ.....

Սուրբ Ծննդեան Հանդէսներ
Հայ քոյրերու վարժարանը, ըստ աւանդութեան, այս տարի եւս իրականացուց Ս. Ծննդեան զոյգ հանդէսներ: Մանկապարտէզի եւ

Նախակրթարանի բաժիններով, երկու յատուկ օրերու ընթացքին, հոգեկան մեծ հաճոյք եւ հրճուանք պատճառելով ծնողներուն եւ վարժարանի մեծ ընտանիքին:

Մանկապարտէզի Ծննդեան Հանդէսը

Հայ քոյրերու Վարժարանը իր կրթական ծրագրին մէջ ներառած ու կիզակէտը դարձուցած է ազգային քրիստոնէական դաստիարակութիւնը, որ կը սկսի նոյնիսկ ամենափոքր դասարաններէն:

Աշակերտները ոչ միայն կը սորվին քրիստոնէական երգեր, շարականներ եւ աղօթքներ այլ նաեւ գործնականօրէն կը մասնակցին ազգային թէ կրօնական տօնակատարութիւններու յայտագրերուն, ինչպէս՝ Ծննդեան տօնը:

Հրաշալի էր Մանկապարտէզի աշակերտներու կողմէ ներկայացուած Ծննդեան հանդէսին, որուն զլիաւոր մասը կը ներկայացնէր Մանկապարտէզի աւարտական դասարանը, իսկ երգերու եւ շարականներու երգեցողութեամբ կը մասնակցէին մանկապարտէզի բոլոր աշակերտները:

Հիանալի պատկեր մըն է, դիտել մանուկներու անմեղ եւ հարազատ ներկայացումը Քրիստոնէական կրօնի մեծագոյն տօնին՝ Ծնունդին, ուր Աստուածոյ մարդեղութիւնն է որ կ'իրականանայ ու կը ներկայացուի միայն վեց տարեկան մանուկներու կողմէ: Հակառակ որ ամէն տարի նոյն թատրոնը կը ներկայացուի, բայց ամէն տարի մեծ հետաքրքրութեամբ եւ մեծ հաճոյքով կը սպասուի այս հանդէսը, որուն իրականացումն ու յաջողութիւնը կը պարտինք իրենց սնօրէնուհի՝ Սոնա Գազանճեանի հովանաւորութեամբ աշխատող ուսուցչուհիներուն, որոնք մեծ խնամքով եւ համբերութեամբ կը սորվեցնեն, կը վարժեցնեն եւ կը բացատրեն, որպէսզի փոքրիկներ հասկնալով եւ հաւատալով իրենց ներկայացուցած պատկերներուն կատարեն սպասուածը: Երգերու պատրաստութիւնը արդիւնքն է վարժարանի երաժշտութեան ուսուցչուհի՝ Վարդուհի Պաղտասարեանի հետեւողական եւ բժախնդիր աշխատանքին, օգնութեամբ դասարանի ուսուցչուհիներուն փոքրերը գրեթէ մասնագիտացած երգչախումբի մակարդակով զեղեցկօրէն կ'աւետեն Յիսուս

Մանուկի Ծնունդը, ապա սրահը կը վերածեն տօնական մթնոլորտի երգելով խանդավառ եւ ուրախ տօնական դասական երկլեզու երգեր: Այսպէս տեղի ունեցաւ Հայ Քոյրերու Վարժարանի Մանկապարտէզի բաժնի Սուրբ Ծննդեան հանդէսը՝ Շաբաթ, Դեկտեմբեր 20 2014ի առաւօտեան մեծ խանդավառութիւն ստեղծելով Մանկապարտէզի ծնողներուն մօտ, որոնք մեծ թիւով ներկայ էին վայելելու իրենց զաւակներու ներկայացուցած հրաշալի ծննդեան պատմութիւնը:

Նախակրթարանի Ծննդեան Երգչախումբը

Գեղեցիկ է դիտել եւ ունկնդրել խնամքով պատրաստուած եւ համադրուած աշխատանք մը՝ որ միայն հրացում կը պատճառէ ունկնդիրին:

Այսպէս էր զգացումը երեքշաբթի գիշեր, 22 Դեկտեմբեր 2014ին Հայ Քոյրերու Վարժարանի նախակրթարանի ծնողներուն, որոնք յոգնեցնող օրուան մը աւարտին հաճոյքը ունեցան ունկնդրելու եւ ներկայ գտնուելու իրենց զաւակներու կատարած մեկնաբանութիւններուն՝ աշխարհով մէկ դասականացած նոր Տարուան յատուկ երգերուն եւ Սուրբ Ծննդեան նուիրուած շարականներուն:

Վարժարանը երեք խումբերով ներկայացաւ բեմահարթակ Վարժարանի Տնօրէնուհի Քոյր Լուսիայի կատարած բացման խօսքէն ետք եւ ներկայացուց այնպիսի գեղեցիկ, մշակուած եւ համադրուած ծրագիր մը հանդիսատեսը փոխադրելով Սուրբ Ծննդեան միաստիկ եւ Ամանորեան խանդավառ

մթնոլորտի մէջ:

Հանդիսութեան ընթացքին խօսք առաւ նաեւ Վարժարանի խորհրդատու Մարմնի անդամ Տօք.Նշան Օտապաշեան որ ներկայացուց մօտիկ ապագայի մէջ իրագործելի վարժարանս մարզական գոց մարզադաշտով օժտելու ծրագիրը եւ տուաւ ծրագրի իրականացած բաժինը եւ մօտիկ ապագային իրականանալի մասը փաստացի տուեալներով:

Ամանորի սեմին գեղեցիկ ծաղկեփունջ մըն էր՝ նուիրուած ծնողներուն, որոնց հոգին լեցուեցաւ հպարտութեամբ եւ հրճուանքով ի տես իրենց զաւակներուն, որոնք մօտաւորապէս մէկուկէս ժամ մեծ հաճոյքով եւ պատասխանատուութեամբ ներկայացուցին գեղեցիկ երգերու հոյլ մը՝ համադրուած եւ պատրաստուած վարժարանիս երաժշտութեան ուսուցչուհի Վարդուհի Պաղտասարեանի կողմէ: Տնօրէնութեան, ուսուցչական կազմի, ծնողներու եւ աշակերտութեան համագործակցութեամբ իրականացած գեղարուեստական սքանչելի երեկոյ մը, որ կ'արդարացնէր Հայ Քոյրերու վարժարանի քրիստոնէական դաստիարակութեան սկզբունքը, աշակերտները պահելով հայ խօսքի, երգի եւ շարականի երգեցողութեան մթնոլորտի մէջ, ի գոհունակութիւն դաստիարակին եւ ծնողքին:


Վարձքը կատար բոլոր նուիրեալներուն:

Շնորհակալութիւն բոլոր ծնողներուն եւ նուիրատուներուն:

Կը շնորհաւորենք Նոր Տարին եւ կը մաղթենք առողջ եւ բեղուն ու բարեբեր օրեր:

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ Հին Գիրքերու Նորոգութեան Համար Հեռ.աձայնել՝ ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

ՈՐՔԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԻՓՈՐ ԿԱՐԱԿԻՉ ԿՐԸԼԱՅ

Մասնագետները կը պատասխանեն շատերը յուզող այն հարցումին, թէ որքա՞ն ժամանակ կրիփոմ հիւանդ մարդը կրնայ վարակիչ ըլլալ:

Ըստ մասնագետներուն՝ առաջին հերթին կրիփոմ հիւանդ եւ շրջապատող մարդոց համար վարակիչ շատ մարդիկ սկիզբը չեն ալ ենթադրեր, որ հիւանդ են, հիւանդութեան նախանշանները անոնց մօտ կը սկսին երեւիլ աւելի ուշ:

Կրիփոմ վարակուելէն մօտ 24-72 ժամ ետք ան կրնայ վարակել նաեւ ուրիշները, եթէ նոյնիսկ անոր մօտ տակաւին ոչ մէկ նախանշան կայ: Նախանշաններուն ի յայտ գալէն ետք ան կը շարունակէ վարակիչ ըլլալ դեռ քանի մը օր եւս: Ի դէպ, տկար դիմադրողակա-

նութիւն ունեցող երեխաներն ու մարդիկ աւելի երկար վարակող կ'ըլլան, քան միւսները. անոնք կրնան տարածել կրիփի վարակը մօտ երկու շաբթուան ընթացքին: Կրիփի վարակը կը տարածուի օդակաթիլային ճանապարհով: Կրիփի հիմնական ախտանշաններն են՝ տաքութիւնը, դողը, հարբուխը, գլխացաւը, մկանային ցաւերը, մորթի տաքութիւնն ու կարմրութիւնը, աչքերու արցունքոտութիւնը, թուլութիւնը կամ յոգնածութիւնը, կոկորդի ցաւը:

Այսպիսի ախտանշանները կրնան ըլլալ նաեւ մասնաւոր ըլլալու պարագային, այնպէս որ շատ մասնագետներ խորհուրդ կու տան դիմել բժիշկի՝ ճիշդ ախտորոշում ստանալու համար:

ՓԱՍՏԵՐ ԵՐՁԱՆԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Երջանկութիւնը բաւական ընդգրկուն հասկացութիւն է, որուն կը ձգտին հասնիլ անխտիր բոլորը:

Երջանկութեան մասին փաստեր՝

-Անիկա ունի ժառանգական բնուէթ. իրականութեան մէջ մարդին քն իրեն կը սորվեցնէ լաւատես եւ երջանիկ ըլլալ,

-Մասնագիտական յաջողութիւնները մարդը երջանիկ կը դարձնեն. մարդ կրնայ յաջողակ ըլլալ իր մասնագիտական ոլորտին մէջ, սակայն՝ դժբախտ անձնականի,

-Ձեռ կրնար երջանկութիւն գնել. գիտնականները պարզած են, որ մարդ գնումներ կատարելու եւ

առհասարակ գումար ծախսելու ընթացքին դրականօրէն կը տրամադրուի ամէն ինչի հանդէպ եւ կ'ունենայ երջանկութեան զգացում,

-Երջանիկ մարդիկ միամիտ են. երջանկութիւնը կը նպաստէ ուղեղի աշխատանքի աշխուժացման եւ կը բարձրացնէ աշխատունակութիւնը,

-Երջանիկ ըլլալ կը նշանակէ երբեք բացասական զգացումներ չտածել. իրականութեան մէջ բացասական զգացումներու առկայութեան ընդունումը կ'օգնէ առաւելագոյնս պայքարելու անոնց վերացման դէմ:

ԵՐԲ ԵՒ ՈՐՈՒՆ ԶԱՍԱՐ ԶՈՒԿԸ ԿՐՆԱՅ ԿՆԱՍԱԿԱՐ ԸԼԼԱԼ

Զուկը կը պարունակէ առողջութեան համար օգտակար շարք մը նիւթեր, բայց որոշ պարագաներու ձուկը կրնայ նաեւ վնասակար ըլլալ:

1. Ծովու եւ գետի ձուկը կը պարունակէ զանազան մակաբոյժներ, որոնք մարդը կրնան վարակել շարք մը հիւանդութիւններով, եթէ ձկնային ճաշատեսակը սխալ պատրաստուած ըլլայ:

2. Ցաւօք սրտի, մեր օրերուն ջուրին մէջ շատ կը յայտնուին թունաւոր թափօններ. ձուկը կը կլանէ բոլոր այդ վնասակար նիւթերը (գինգը, պղինձը, կապարը, սնդիկը, նիկելը, մկնդեղը, քրոմը, եւ այլն), որոնք կրնան զգալի վնաս պատճառել մարմնին: Օրինակ՝ այդպիսի ձկան մէջ պարունակուող սնդիկը անպտղութիւն կը յառաջացնէ թէ՛ տղամարդոց, թէ՛ կիներու մօտ: Անիկա կրնայ նաեւ յանգեցնել ձուկարաններու ժառանգական վնասի: Շատ պարզապէս երբ կրնան վնասուիլ երիկամները, կը յառաջանայ մտաւոր յետամնացութիւն եւ նոյնիսկ՝ քաղցկեղային հիւանդութիւններ:

3. Զուկին մէջ պարունակուող սնդիկը վնասակար է յղի կիներու համար, քանի որ կրնայ յառաջաց-

նել պտղի զարգացման արատներ: Այդ իսկ պատճառով յղիներուն խորհուրդ չի տրուի ուտել այնպիսի տեսակի ձուկեր, որոնք երկար կ'ապրին (օրինակ՝ թունա), քանի որ իրենց երկարատեւ կեանքին ընթացքին անոնք կը հաւաքեն բազմաթիւ վնասակար նիւթեր:

4. Զուկը կրնայ վնասակար ըլլալ, եթէ անիկա սխալ պահպանուած է, քանի որ անիկա արագ փճացող ուտելիք է եւ կը պահանջէ պահպանման յատուկ պայմաններ: Իսկ արդէն փճացած ձուկը կրնայ թունաւորման եւ աղետամոքսային խնդիրներու պատճառ դառնալ:

5. Կարծիք կայ, որ վնասակար է նաեւ ծխահարուած ձուկը (յատկապէս, եթէ անիկա ենթարկուած է տաք եւ ոչ թէ պղծ ծխահարման), քանի որ անոր մէջ կը կուտակուին քաղցկեղածին նիւթեր:

Ուտել, ձկան վնասներէն խուսափելու համար ցանկալի է ուտել թարմ ձուկ, ի դէպ ընտրել այն տեսակները, որոնք այնքան ալ երկար չեն ապրիլ եւ չեն կուտակել իրենց մէջ վնասակար նիւթեր: Զուկը պէտք է պատրաստել շատ լաւ կերպով, որպէսզի անոր մէջ պարունակուող մակաբոյժները չգործառնեն ջերմային մշակումէն ետք:

ՅԵՐԿԱՅԻՍ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՐԵԼՈՐԱԳՈՅՆ ԽՆՂԻՐ ԿՐ ՀԱՆՂԻՍԱՆԱՅ ԱՄՈՒՆԱԼՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԹԻՒՆՆԵՐՈՒ ԹԻՒԼԻ ՄԱՃՐ, ՈՐ ՆԱԵՆ ՀՆԱՐԱԼՈՐ Է՝ ԿԱՊՈՒԾ Է ԱՄՈՒՆԻՆՆԵՐՈՒ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹԵԱՆ: ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ, ՂԵՎՔԵՐՈՒ ՄԵԾ ՄԱՍԻՆ ՄԷՋ ԿԱՐԵԼԻ Է ԿԱՆԽԱՏԵՍԵԼ ԵՎ ԿԱՆԽԱՐՂԻԵԼ ԳԱՆՈՆՔ, ԵՐԲ ԱՊԱԳԱՅ ԱՄՈՒՆԻՆՆԵՐՈՒ ԼԻՎՐՔԷՔՐՈՅՆ ԴԱՆՆԱՆ ԳԻՐԱՐ ԵՎ ԵՏԱԳԱՅԻՆ ԱՏԵՂԾՈՒՄ ԲՈՒՄԱՂԱՐՁ ՎՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԵՎ ՍԻՐՈՅ ՎՐԱՅ ՀԻՄՆՈՒԾ ԹԻՒՆՆԵՐՈՒ:

Յերկայիս հասարակութեան համար կարեւորագոյն խնդիր կը հանդիսանայ ամուսնալուծութիւններու թիւի մաճը, որ նաեւ հնարաւոր է՝ կապուած է ամուսիններու անհամատեղելիութեան: Իրականութեան մէջ, ղեւքերու մեծ մասին մէջ կարելի է կանխատեսել եւ կանխարգիլել գանոնք, երբ ապագայ ամուսինները լիարժէքօրէն ճանչնան զիրար եւ յետագային ստեղծուի փոխադարձ վստահութեան եւ սիրոյ վրայ հիմնուած միութիւն:

Գործօններ՝ ամուր ու ներդաշնակ ընտանիքի ստեղծման համար.

Ֆիզիքական գործօն - անիկա ունի գուտ ներհմտակաբնոյթ. անկախ սեռային պատկանելիութենէն մարդը միւսի մօտ կը յառաջացնէ համակրանք կամ հակակրանք: Անիկա անձնական կեցուածք է, որ կ'որոշուի արտաքին պատկերով՝ դէմքը, ձայնի ելեւէջները, տուեալ մարդուն բնորոշ բոյրը, շարժումները, խօսքը եւ վարքը: Շփումներու առաջին իսկ փուլին ձեւաւորուելով՝ այս գործօնը կը դրսեւորէ բացառիկ կայունութիւն եւ կը պահպանէ իր դրական կամ բացասական երանգը ամբողջ կեանքի ընթացքին: Անկախ տարիքէն, անիկա կապուած է սեռական գործօնի հետ. երիտասարդներուն մօտ ատիկա ունի մեծ ազդեցութիւն, իսկ տարիքի հետ կը մեծնայ մշակութային գործօնի դերակատարութիւնը:

Նիւթական գործօնը - կ'որոշուի ընտանիքի ընդհանուր նիւթական կարգավիճակին մէջ իւրաքանչիւրի ներդրման փոխարարբերութեամբ, եւ նաեւ թէ ինչպիսին

են անոնց նիւթական իմաստով իրարմէ սպասումները եւ պահանջները: Զոյգերու միջեւ համապատասխանութիւն կրնայ դիտուիլ ինչպէս բարձր նիւթական պահանջներու, այնպէս ալ ցած պահանջներու եւ սպասումներու պարագային:

Մշակութային գործօն - ասիկա կ'որոշուի ամուսիններու մտաւոր-մշակութային պահանջներուն համընկնումով: Այս գործօնին դրսեւորումը կրնայ փոխուիլ կեանքի ընթացքին: Սեռական գործօնով կ'որոշուի, թէ ինչպիսի սպասումներ ունին ամուսինները իրենց անձնական կեանքէն, եւ իրականութեան մէջ ատիկա կը համընկնի իրարու պահանջներուն: Այդ գործօնը կրայ փոխուիլ՝ կախեալ տարիքէն եւ սեռական առողջութեան վիճակէն:

Հոգեբանական գործօնը յատուկ տեղ կը գրաւէ՝ կարծես հանդիսանալով իւրապատուկ համակարգող. այդ գործօնը կ'ապահովէ մարդու վարքի, միջանձնային փոխյարաբերութիւններու, բնաւորութիւններու եւ սեռային դերի ամբողջականութիւնը: Ներդաշնակ ընտանիքի ձեւաւորումը տեղի կ'ունենայ աստիճանաբար՝ առաջին սիրահարուածութեան հիացմունքէն, յուզումնալից ապրումներէն մինչեւ ամէնօրեայ կենցաղային մանրուքներէն հիասթափութիւն, մինչեւ իրականութեան մէջ ամուսինի կամ կնոջ ընդունում՝ իր արժանիքներով եւ թերութիւններով:

Այսինքն ամուր ընտանիքի ձեւաւորումը շարունակական գործընթաց է, ուր իւրաքանչիւրը պէտք է զգայ իր մասնակցութեան կարեւորութիւնը:

ՅՈՒՐՏԻ ԶԳԱՅՈՒՄԸ ԿՐՆԱՅ ԿԱՐԱԿԻՉ ԸԼԼԱԼ

Հետաքրքրական եզրայանգման եկած են գիտնականները վերջերս կատարուած հետազոտութեան իբրեւ արդիւնք՝ արձանագրելով, որ ցուրտի զգացումը մէկէն կրնայ փոխանցուիլ ուրիշին, ինչպէս ծիծաղն ու յօրանջելը:

Փորձի ժամանակ 36 կամաւորներու ցուցադրուած են տեսանիւթեր, ուր դերասաններէն մէկ մասը ձեռքերը դրած են տաք, միւսը՝ պաղ, իսկ երրորդ խումբը՝ գաղջ ջուրի մէջ:

Մասնակիցներուն վարքը եղած է այնպիսին, որ անոնց մօտ, որոնք դիտած են պաղ ջուրով տեսանիւթը, արձանագրուած է ձեռքերու ջերմաստիճանի նուազում, ձախիւնը՝ 0,2, աջիւնը՝ 0,05 աստիճանով:

ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԵԱՆ ԴԱԿԱՍԸ ԱԻԵԼԻ ԿՏԱՆԳԱԻՈՐ Է ՔԱՆ ԾԱՐՊԱԿԱԼՈՒՄԸ

Գիտնականները եկած են այն եզրակացութեան, որ եւրոպացիներու մէջ մարմնամարզութեան պակասը երկու անգամ աւելի յաճախ մահուան պատճառ կը դառնայ, քան ճարպակալումը:

Հետազոտութեան տուեալներուն համաձայն, Եւրոպայի մէջ տարեկան շուրջ 600 հազար մարդ կը մահանայ մարմնամարզանքի անբաւարարութեան հետ կապուած

Անոնց մօտ, որոնք դիտած էին այլ տեսանիւթեր, ոչ մէկ փոփոխութիւն արձանագրուած է:

Հետազոտութեան հեղինակներէն մէկը այդ դրսեւորումը բացատրած է անով, որ այն մարդու մօտ, որ կը հետեւի արտակարգ իրավիճակի մէջ յայտնուածին, «կը միանայ» ցաւակցելու կառուցակարգը: Մարդը կը սկսի հասկնալ անյարմար վիճակի մէջ յայտնուած մարդու տազնապններն ու անհանգստութիւնները եւ «գործի կը դրուի» կրկնօրինակման համակարգը: Ատիկա կը նշանակէ, որ դիտողին մօտ ի յայտ կու գան հայելային նիւրոններ, որոնք կը ստեղծեն այն մարդու վիճակի ներքին տարբերակը, որուն ան կը նայի:

Հիւանդութիւններէ: Մինչդեռ ճարպակալման հետ կապուած հիւանդութիւններէն կրկնակի պակաս մարդիկ կը մահանան՝ մօտաւորապէս 300 հազար:

Գիտնականները կը հաւատաբանեն, որ օրական արագ քայլերով 20 վայրկեան զբօսանքը՝ նառակեաց ապրելակերպի հետ կապուած հիւանդութիւններու լաւագոյն կանխարգիլումն է:

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

www.massisweekly.com
Updated every Friday

Ինչպես հակազդել Էրդողանի ցինիկ քաղաքականութեանը

Շարունակուած էջ 2-էն

Թեան շրջանակներում Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանը հրաւեր է ուղարկել անգամ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանին՝ նախապէս իմանալով, որ այն մերժուելու է: Աւելի վաղ Սարգսեանն էր հրաւեր ուղարկել՝ մասնակցելու համար Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի միջոցառումներին: Սա պարզապէս դիւանագիտական չարածճիւղութիւն է: Թուրքերը հիանալի հասկանում են, որ Գալիպոլիում դաշնակիցների օգնականները մեկնարկել է Ապրիլի 25-ին՝ տուեալ ժամանակ Թուրքիայի կառավարութեան իրականացրած Հայոց ցեղասպանութեան յաջորդ օրը, եւ որ Աւստրալիան ու Նոր Զելանդիան Anzac-ի (Australian and New Zealand Army Corps) օրը նշում են Ապրիլի 25-ին: Դեռ երկու տարի առաջ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գիլը Գալիպոլիի ճակատամարտի 98-ամեակը նշել է 2013 թուականի Մարտի 18-ին: Դա այն օրն է, երբ բրիտանական ռազմածովային նաւատորմը ծովակալութեան առաջին լորդ Ուինսթոն Չերչիլի հրամանով սկսեց Դարդանելի ռմբակոծութիւնը: Այն ժամանակ Թուրքիայում որեւէ մէկի մտքով չանցաւ Գալիպոլիի ճակատամարտի հերթական տարեդարձը նշել Ապրիլի 24-ին»:

Յիշեցնենք, որ 2013թ. Մարտին բրիտանական The Independent թերթում հրատարակուել էր Մերձաւոր Արեւելքի հարցերով փորձագէտ Ռոբերտ Ֆրիսկի՝ «Հայ հերոսը, որին Թուրքիան նախընտրում է մոռացութեան մատնել» խորագրով յօդուածը, որում նշուած էր, որ Թուրքիայի կառավարութիւնը պլանաւորում է 2015թ. նշել 1915 թուականին Գալիպոլիի ճակատամարտում (Դարդանելի օպերացիա) տարած յաղթանակի յոբելեանական 100-րդ ամեակը, սակայն նախընտրում է մոռացութեան մատնել Դարդանելի ճակատամարտում աչքի ընկած հայ հերոս Սարգիս Թորոսեանին:

Թուրքական իշխանութիւնները

ընդհանուր թեման 100-ամեակին ընդառաջ որոշել են վարել այնպիսի քաղաքականութիւն, որը ոչ միայն չի նպաստի Հայաստան-Թուրքիա շարաքերութիւնների կարգաւորմանը, այլեւ ընդդէմ Ցեղասպանութեան ճանաչման քայլեր են իրականացնում: Թուրքիայի իշխանութիւնները նոյնիսկ այնքան ցինիկ են, որ նոյն օրը՝ Ապրիլի 24-ին, այլ միջոցառում են անցկացնում, որպէսզի այլ երկրներ իր առաջնորդների հրաւիրեն Թուրքիա, այդպիսով մերժեն Սերժ Սարգսեանի հրաւերը՝ այցելել նոյն օրը Երեւան՝ նշելու Ցեղասպանութեան 100-ամեակը:

Թուրքիայի արտգործնախարար Մեւլիտ Չաւուշօղլուն յայտարարել է, որ իրենք Հայոց ցեղասպանութեան հարցում հայկական պնդումների դէմ ունեն իրենց աշխատութիւնները, որոնք ներկայացւում են համակարգուած ձեւով: Չաւուշօղլուն յայտարարել է, որ «Չենթմենների պատերազմ» անուանմամբ յայտնի Դարդանելի ճակատամարտի 100-ամեակի կապակցութեամբ նախագահ Ռեջեփ Էրդողանն ու վարչապետ Ահմեդ Դաւուտօղլուն հրաւեր-նամակներ են յղել 102 երկրի առաջնորդներին: Նրա խօսքերով՝ Թուրքիան այդ հարցում որեւէ խորականութիւն չի կիրառել եւ հրաւերներ է ուղարկել Առաջին համաշխարհային պատերազմին ու Դարդանելի ճակատամարտին մասնակից բոլոր երկրներին: Չաւուշօղլուն խոստովանել է, որ օսմանեան բանակում ծառայել են նաեւ հայ զինուորները՝ նրանց մի մասին մեղադրելով երկրի արեւելքում «ապստամբութիւն բարձրացնելու» մէջ: Չաւուշօղլուն յայտարարել է, որ 2015 թուականը ոչ միայն հայկական պնդումների, այլեւ՝ Դարդանելի ճակատամարտի 100-րդ տարեդարձն է:

Ահա, այսպիսին է Անկարայի վարած քաղաքականութիւնը: Լրջօրէն պէտք է մտորել, թէ Ցեղասպանութեան 100-ամեակից առաջ ինչպէս պէտք է հակադարձել Թուրքիայի իշխանութիւնների այս բաւական ցինիկ մարտավարութեանը:

«ԹՈՒՐԵՐԸ ՊԵՏՔ Է ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՍՕԹԸ ՍԱՔՐԵՆ»

Շարունակուած էջ 7-էն

նութեան ապրուստը, ինչքը եւ հարստութիւնը կայացած է ցեղասպանութեան զոհ գացած եւ աքսորուած հայերու ունեցուածքին վրայ: Այս հատուածը շատ լաւ գիտէ, թէ ցեղասպանութիւնը ընդունելով ամէն ինչ վերջ պիտի չգտնէ: Պահանջատիրութիւնը պիտի յաջորդէ ճանաչման: Ուրեմն այս իրողութեան ներքոյ, ո՞վ կ'ուզէ օժանդակել այդ ձեր ըսած ժայռերը վար առնելու:

- Յառաջիկայ Ապրիլին Պոլիսը նաեւ պիտի դառնայ ամբողջ հայութեան համար կարելոր հանդիսավայր: Ի՞նչ են ձեր ակնկալիքները այդ առումով եւ արդեօք որեւէ համակարգուած աշխատանքներ կան այդ ուղղութեամբ:

- Այո՛, որոշ հատուած մը պատրաստութեան մէջ է հարիւրամեակը նշելու ամենապատշաճ կերպով: Անշուշտ այդ հանդիսավայրը թատերավայրի դարձնելու փորձեր ալ անպակաս պիտի չըլլան: Թէ թուրք եւ թէ հայ անձնաւորութիւններ իրենց դերերը պի-

տի կատարեն եւ կարելի եղածին չափ պիտի ազաւորեն իրողութիւնը կամ եղելութեան լրջութիւնը: Իմ ակնկալութիւնը մեր բոլորին ակնկալութիւնն է, ճանաչում եւ հատուցում: Արդարութիւնը մեր բոլորի պահանջն է: Themis-ի (արդարութեան չաստուածը յունական դիցաբանութեան մէջ Ջ. Բ. Ս. Ա.) արդարութեան կշիռը մինչեւ օրս ծառայած է թուրքերուն, այլեւս քիչ մըն ալ մեզի թող ծառայէ: Ինչ կը վերաբերի իմ գործունէութեան, կրնամ ըսել թէ ներկայիս որեւէ աշխատանք չեմ ստանձնած: Թող չկարծուի, որ անտարբեր եմ, ուղղակի ես կողմ եմ, որ պէտք է ներդրամութիւնը հայցուի: Ուրեմն բեմը թուրքերունն է, իրենք պէտք է խորհին թէ ի՞նչ պէտք է ընեն պատմութեան այս մեծ ամօթը եւ իրենց թողած կեղտը մաքրելու համար: Ես չեմ կրնար ծրագրիներ մշակելով, ինքզինքս աջ ու ձախ նետելով այս հարցի շուրջ իրենց աջակցութիւն ցուցաբերել: Բայց պիտի չմերժեմ կարծիքս կիսուելու գաղափարներս կիսել բոլոր անոնց հետ, որոնք լսել կ'ուզեն:

ՀՐԱՆՔ ՏԻՆՔԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Շարունակուած էջ 8-էն

թիւններէն պէտք չէ յուսալ որեւէ լուծում մեր դատին կապակցութեամբ, այլ պէտք է մեր դատը ժողովուրդի մակարդակին իջեցնենք: Մէկ խօսքով՝ մեր դատը պէտք է առաջին հերթին ծանօթացնենք ինդրոյ առարկայ թուրք կառավարութեան արմատներուն, որն է պարզ ժողովուրդը:

Եւ այսօր մենք բարեբախտաբար ականատես ենք այդ երեւոյթին՝ երբ տասնեակ մը մտաւորականներ արթնացած իրենց խոր քունէն, կը դատապարտեն թուրք կառավարութիւնը եւ կ'արտայայտուին ի նպաստ մեր իրաւունքներուն՝ որոնց յառաջագոյնն է Ցեղասպանութեան ճանաչումը, շարունակեց յարգելի բանախօսը:

Տաղանդաշատ պարմանուհի Մարալ-Քիւրտեան դարձեալ բեմ բարձրացաւ եւ այս անգամ մեզի ներկայացուց Կոմիտասի մշակած «Տէլ Եաման»-ն ու անոր Կոունկը, դիւթելով հանդիսատեսները իր մետաքսային ձայնով:

Ապա Մեղեղի Մանոյեան ասմունքեց Դանիէլ Վարուժանի «Դերենիկը», աւարտելով օրուայ պատշաճ զեղարուեստական յայտագիրը:

Փակման խօսքով հանդէս եկաւ Փասատինայի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու հոգեւոր հովիւ՝ Արժ. Տէր Սարգիս Ա. Քհն. Փետրեանը: Ան բնաբան ընտրած էր Հայց. Առաքելական Եկեղեցու Ամերիկայի Արեւմտեան Թեմի Ցեղասպանութեան 100ամեակի լողունգը՝ «Յարգել Անցեալը, ճանչնալ Ներկան եւ Կերտել Ապագան»:

Տէր Սարգիս դիտել տուաւ որ մենք պէտք է կարենանք Անցեալը՝ Ներկային միջոցաւ փոխանցել Ապագային, ապա թէ ոչ պիտի կորսնցնենք մեր ինքնութիւնը: Ասոր համար՝ ան շեշտեց, անհրաժեշտ է որ մենք թրծենք մեր նոր սերունդը ազգային ոգիով որովհետեւ անոնք կը հանդիսանան անցեալէն ապագային կապող այդ շղթային էական մէկ օղակը: Ան ապա իր գոհունակութիւնը յայտնեց ուսանողներու մասնակցութեան սոյն ձեռնարկին:

Դասախօսութեան աւարտին տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն եւ հանդիսատեսները աւիթը ունեցան մօտէն ծանօթանալու յարգելի բանախօսին, որ գոհացում տուաւ իրենց զանազան հարցադրումներուն:

Թղթակից

ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՐԹԱՆՔ
 Թերթիս բարեկամներէն ԳԷՈՐԳ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ առկածի մը ենթարկուած ըլլալով ներկայիս կը բոլորէ ապաքինման շրջանը: «Մասին» շուտափոյթ ապաքինում կը մաղթէ անոր:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ



Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 * \$100,00 (first class) for USA
 \$ 100,00 (Air Mail) for Canada.
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State: ----- Zip Code: -----
 Country: -----
 Tel: ----- Fax: -----

ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ

ՆԵՐՍԷՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ (ԲԱԼԱՅԵԱՆ)

Ներսէս Տ. Մեսրոպեան-Բալայեանի Բերթուժաների հաւաքածոն. 120 էջերից քաղկացած. «Երեւան» տպարանից.
 Գրքի կազմի եւ պատկերի ձեւաւորումն ու նկարազարդումը՝ Նարեկ Նազուրեանի - Reak Point Studio:
 Դիմել Գլենդէյլի Ապրիլ (818) 243-4112, Պերն (818) 244-3830 եւ Սարդարապատ (818) 500-0790 գրատուններին, Երեւան տպարանին, կամ հեղինակին՝ (818) 240-9604 համարով:

ՏՈՒՆԴԱՐՁԻ ԵՐԿԱՐ ԾԱՄԲԱՆ...

Շարունակում է լուսավորել 13-էն

մալարիայի տենդ կայ: Գործն շատ է: (Օգոստոս 9-10, 1915 Գալէ): «11,000 վիրաւոր եկած էր եւ անոնց վէրքերը դարմանելու ատեն չկայ. Զբաղած ենք միայն նաւ բարձրացնելով ուղարկելու համար: Տեսնենք ինչ՞ պիտի պատահի»: (Օգոստոս 11-12, 1915 Ագպաշ): «...այս գիշեր անքուն մնացի մինչեւ առաւօտ. այդքան որ շատ է գործը: Այս տողերը կը գրեմ հակայ հիւանդատար նաւու մը մէջ 2000 վիրաւորներով լեցուն: Պատերազմը կը կիրն անգամ բռնկեցաւ ասաւոր սաստկութեամբ» (Օգոստոս 14-15, 1915 Ագպաշ):

Եւ կարծէք չէր բաւեր պատերազմի արհաւիրքը՝ եւ Աւետիս ձէպէճեան պիտի ապրէր նաեւ «հայտն»...: Եւ մէկ-մէկ պիտի նկարագրէր ապրուած «վիշտը»՝ մինչեւ որ՝ ինչպէս որ ինք կ'ըսէ քանիցս՝ «...սիրտ չունեցայ օրագիրս շարունակելու»:

«12000 գաղթականներ անցան Մարաշի քովէն, անգութ, անհամար տեսարաններ ու նկարագրութիւններ, այդ պատճառով ալ սիրտ չունեցայ օրագիրս շարունակելու (Մարաշ 11-20, Յունիս, 1916): Ու կը հանդիպի հայու բեկորներու...: « Խաղաղ ճակատան գիւղը՝ ամբողջովին պարպուած...մնացած էին հինգ ընտանիքներ միայն, որոնց այցելեցի: Երկրորդ հանգրուանը եղաւ Կլուշկերտ անուն ուրիշ հայ գիւղ մը: Այս կողմերը հարիւրաւոր նման հայ գիւղեր կան, բոլորը դատարկ, բնակչութիւնը տեղահան: Կլուշկերտէն ելլելով հասանք Բալուէն մէկ ու կէս ժամ հեռավորութեան վրայ Խօշ-մաթ հայկական գիւղը, ուր սկսանք հաստատուիլ: Երեք հարիւր տուն գիւղի մէջ մնացած էին չորս կամ հինգ ընտանիքներ: Քիւրտ տարագիրներ փլած էին բոլոր տուները» (Սեպտեմբեր 21-30, 1916 Խօշմաթ):

Եւ Աւետիս պիտի դիմանար նաեւ տեսնելով «հայու ոսկորներ»...: «...Այստեղ հասանք երեք օր առաջ: Տիգրանակերտի հովիտը տարածուն է: Ճամբան ականատես եղայ սիրտ ճմլող տեսարաններու, ամէն տեղ հայերու ոսկորներ...» (Մարտ 31-Ապրիլ 5, 1917 Տիգրանակերտ):

Աւետիս հեռուէն կ'ապրի նաեւ իր հարազատներուն տառապանքը: «...երէկ վերապատուելի Տիգրան Գունտազճեանի (իր աներորդի-ձձ) վախճանումը լսելով շատ տխրեցայ» (Փետրուար 20-24, 1916 Պերգոս): Ու տակաւին... «...Նոյեմի քրոշս Սեպտա լեռը՝ Սուրիական անապատ քրուած եւ Գէորգ ու Կարապետ տղաներուն մահացած ըլլալը տեղեկանալով՝ շատ տխրեցայ (Ապրիլ 4-6, 1916 Գըրլգ-քիլիսա):

Բայց կայ նաեւ Աւետիսին մարդկային ներաշխարհը՝ եւ այդ ներաշխարհին ապրուած վերիվայրումները...: «...Նոյեմբեր 11ին 40 տարեկան եղայ, վշտալի տարեդարձ: Ալ տեսնենք, 41ը կը բոլորեմ՞ արդեօք, ուր՞ եւ ինչպէս...» (Նոյեմբեր 11-13, 1916, Խօշմաթ): Բայց տան եւ ընտախի կարօտը՝ միշտ ալ յոյսով լեցուցած է զինք...: «...զաւակներուս՝ Ռոպէրին եւ Վահէին նկարները ստանալով շատ ուրախացայ» (Մարտ 14-18, 1917 Խօշմաթ):

Աւետիս ձէպէճեանը հայն էր՝ որ գիտակից էր իր պաշտօնին եւ անոր նուիրուածութեանը...: Պատերազմի ժամանակ երբ ունեւէր

զարնուած ուտեստեղէնի նաւը սկսաւ հրկիզուել՝ ոչ մէկ թուրք գինուոր կը համարձակէր զայն մարել...: Եւ Աւետիսն է դարձեալ...: «...Եղած բարձրութենէն վեր կանգնելով՝ գինուորներուն բացականչեցի, «Օն, արսլաններս, վաթանին ծառայելու օրը այս է. օն, հրդեհը մարելու, օն»: Ընկճուած գինուորները սիրտ առնելով վար խոյացան այդ ցից զառիթափէն՝ եւ սկսան կրակը մարել...» (Սեպտեմբեր 2-3, 1915 Ագմաշ):

Եւ անպայմանօրէն կը սկսիս հարց տալ՝ թէ ինչպէս՞ կրնայ թուրքը Հայը մեղադրել՝ որ ան դաւաճանած է եղեր պետութեան՝ իմ մա «վաթանին»՝ Առաջին աշխարհամարտի ընթացքին...: Բայց Աւետիս լաւ հասկցած էր թուրքը...: Ան չի վարանեցաւ իր յուշերուն մէջ յիշել թէ «...վայրագ ժողովուրդ է...» (Յունիս 25-30, 1916 փերվերլի): Եւ ան յաճախ ապրեցաւ թուրքին «...անախորժու թիւննեւրուն...հայ ըլլալուն պատճառով» (Յունիս 16-29, 1916 Փերվերլի):

Աւետիս ապրեցաւ այս բոլորը՝ քանի ունէր հայուն «տան կարօտը»...: Եւ չուզեց այդ «կարօտը» անկատար ձգել...: «...Տունի մասին կը խորհիմ յարատեւ: Երկու օրէն ճամբայ կ'ելլեմ» (Նոյեմբեր 10-15, 1918 Վան):

Եւ կը սկսի Աւետիսի «տունդարձի երկար ճամբան»...: Եւ այդ երկար ճամբան՝ պիտի ընդգրկէր քառասուն օր ոտքով ճամբորդութիւնը...: Եւ յոգնութիւնը պիտի չի խանգարէր որ ան նկարագրէր Վանը՝ «...լիճը, վարագայ եւ Սիփան լեռներով, շատ հաճելի տեսարան մը կը հայթայթէ» (Նոյեմբեր 15-20, 1918 Վան): Եւ նաեւ նոյնինքն ոտքով ճամբորդելու արկածախնդրութիւնը...: «...Վեց օրէ ռոքով կը ճամբորդենք. այսօր չափազանց յոգնած եմ: Յարմար սնունդ չկայ: Այսօր մեր չորս սայլերը ձիւնի մէջ խրեցան: Ալ գայլեր, վոհմակներով...: կեանքիս ամէնէն անմոռանալի օրերը կ'անցնեմ: Սակայն տուն վերադառնալու զգացումը փորձանքներս մոռցնել կու տան...» (Նոյեմբեր 28-30, 1918 Աղճաճ): Եւ դարձեալ հայկական գիւղերը... «...Պայագիտ հազար տուն հայ կայ եղեր, բայց բոլորը փախուստ տուեր են» (Դեկտեմբեր 4-9, 1918 Պայագիտ): Եւ կանցնի Գարա-Քիլիսայէն եւ նաեւ ձեւիլքեանէն...: «...Շրջանի բոլոր գիւղերը հայկական են, բայց դատարկ» (Դեկտեմբեր 19-21, 1918 ձեւիլքեան):

Աւետիս ձէպէճեան վերջապէս կը հասնի Տրապիզոն: Որմէ ետք ծովու ճամբով Պոլիս՝ եւ ի վերջոյ երկաթուղիով՝ Հալէպ...:

Հալէպի մէջ ան «հանգիստ» չառնէր...: Աւետիս իր բովանդակ կեանքը անցուց ցեղասպանութենէն ճողոպրած իր ժողովուրդին «վերապրումի» առաքելութեանը համար գործելով: Բժշկական, հասարակական, ազգային-եկեղեցական թէ հրապարակագրային աշխուժ գործունէութիւն մը ունեցաւ՝ դառնալով Հալէպահայ գաղութի կազմակերպողներէն մին...:

Աւետիս ձէպէճեան՝ չի յուսահատեցաւ թէ օր մը պիտի հասնէր «տուն»...: Ան դասալիք ալ չեղաւ...: Եւ տունդարձի երկար ճամբան բռնելով՝ ան հասաւ...: Եւ այս Հայուն Սրբազան առաքելութիւնն է...:

«Տունդարձի» երկար ճամբուն մէջ՝ չի յուսահատիլ...: Որովհետեւ՝ Հայը պիտի հասնի իր... «ՏՈՒՆ»ը:

ԶՈՒՐԹ ՍՈՒՏՃԵԱՆ ԴԱՏ ԲԱՅԱԾ Է ԹՈՒՐԲՈՅ ԴԵՍ

Շարունակում է լուսավորել 13-էն

Նիւ Եորք (եւ ոչ թէ Քալիֆորնիա, ինչպէս կը հաղորդէ թրքական մամուլը): Ան պատմեց, որ Հայոց Յեղասպանութենէն ետք, բռնագաղթելով Տիգրանակերտէն, անոր ընտանիքը սկիզբը տեղափոխուած է Լիբանան, այնուհետեւ Քուպա (ոչ թէ Քորէա՝ ըստ թրքական մամուլին) եւ վերջապէս հաստատուած է Միացեալ Նահանգներ:

1967ին Սուտճեան ընտանիքին կալուածը բռնագրաւուած է թրքական կառավարութեան կողմէ՝ տեղական քանի մը թերթի մէջ յայտարարութիւն տեղադրելէ եւ սեփականատէրերը չգտնելու մասին պնդումներ ընելէ ետք:

Քանի մը տարի առաջ Սուտճեանի փաստաբան Ալի Էլպէյօղլուն անոր անունով հայց ներկայացուց թուրքիոյ մէջ՝ ձգտելով վերադարձնել անոր ժառանգութիւնը: 2013ի Ապրիլին դատարանը մերժեց անոր պահանջը՝ պնդելով, որ 10ամեայ վաղեմութեան ժամկէտը անցած է: Վերաքննիչ դատարանը բեկանեց ստորին տեսանի որոշումը եւ պահանջեց գործը վերաքննել՝ հիմնաւորելով, որ Սուտճեան կրնար տեղեկ չըլլալ Տիգրանակերտի տեղական թերթին մէջ տեղադրուած իրաւական յայտարարութեան մասին գոյքի բռնագրաւումէն առաջ: Դատարանը յայտարարեց, որ անկա առնուազն պէտք է տեղադրուէր ամբողջ երկրին մէջ լայն տարածում ունեցող թրքական թերթերու մէջ:

Փաստաբան Էլպէյօղլու պարզաբանեց, որ Սուտճեանի կալուածի բռնագրաւումը մասնաւոր սեփականութեան իրաւունքի խախտում է, ինչպէս սահմանուած է Մարդու իրաւունքներու եւ հիմնական ազատութիւններու եւրոպական պայմանագիրով:

Նոյնիսկ եթէ Սուտճեան շահի իր դատական գործը, քիչ հաւանական է, որ թուրքիոյ կառավարութիւնը վերադարձնէ տասնեակ միլիոնաւոր տոլարներով գնահատուող շատ արժէքաւոր հողատարածքը, որուն վրայ կը գտնուին Տիգրանակերտի ռազմական եւ քաղաքացիական օդակայանները: Այդ իսկ պատճառով անոր փաստաբանը

«Միլիոն» թերթին յայտնեց, որ Սուտճեան միայն հատուցում կը պահանջէ իր ընտանիքին պատկանող կալուածի արժէքին չափով:

Էլպէյօղլու նաեւ «Միլիոն» չին ըսաւ, որ Սուտճեանի գործը դուռ պիտի բանայ բազմաթիւ նման դատերու առջեւ: Յատկանշական է, որ թրքական թերթը իր յօդուածը վերնագրած է «Սփիւռքի Յոյսը»:

Թրքական լրատուամիջոցները չէին անդրադարձած այն պարագային, որ եթէ վերաքննիչ դատարանը չբաւարարէ Սուտճեանի հայցը, ան կրնայ իր գործով դիմել Մարդու իրաւունքներու եւրոպական դատարան: ՄԻԵԴի դրական որոշումը պիտի յառաջացնէ դատական հայցերու ամբողջ հեղեղ մը համայն հայութեան կողմէ, որուն նախնիները ունեցած են կալուածներ, որոնք Հայոց Յեղասպանութեան ժամանակ բռնագրաւուած են թրքական կառավարութեան կողմէ:

Թուրքիոյ մէջ կան անթիւ այլ արժէքաւոր կալուածներ, որոնք բռնագրաւուած են հայերէն, ներառեալ՝

- Անգարայի մէջ նախագահական պալատը, որ մինչեւ վերջերս օգտագործուած է էրտողանի եւ թուրքիոյ նախկին նախագահներուն կողմէ, կը գտնուի Գասապեան ընտանիքին պատկանող տարածքին վրայ:

- Պոլսոյ Աթաթուրքի անուան օդակայանը մասամբ կառուցուած է վանեցի Գէորգ Սարեանի ընտանիքին պատկանող տարածքին վրայ:

- Ինճիրլիքի Միացեալ Նահանգներու ռազմականայնը կը գտնուի քանի մը հայ ընտանիքներու պատկանող կալուածներուն վրայ. անոնք դատական հայց ներկայացուցած են Միացեալ Նահանգներու դաշնակցային դատարան՝ ընդդէմ թուրքիոյ կառավարութեան:

Այս եւ հայերուն պատկանող հազարաւոր այլ կալուածներ պէտք է վերադարձուին իրենց օրինական տէրերուն՝ իբրեւ արդարութեան մասնակի վերականգնում, գործը թուրքիան պարտք է հայ ժողովուրդին:

Թարգմանեց՝
ՌՈՒԶԱՆՆԱ ԱՒԱԳԵԱՆ

ԽՆԱՍԱԿԱԼ ԿՈՒԶՈՒԻ
Թահանկայի շրջանին մէջ, Տիկնոջ մը համար
խնամակալ կ'ուզուի:
Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել
(818) 875-8021 թիւին:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՍԱՍՆՈՒԹԻՆՆԵՐ՝
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Email: massis2@earthlink.net

«ՀԱՅԵՐՆ ԻՐԵՆՑ ԲՆՕՐՐԱՆՈՒՄ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ»

Մարուսակուած էջ 6-էն

զնում, որոնք այժմ միլիոններով ապրում են նույն տարածքում եւ իրենց կոչում են ալեւի՝ ղըզըլբաշ, զազա:

Հայերի երկրորդ դժբախտ պատահարը դարձեալ կապուած է իրանի հետ, որի տիրապետութեան տակ գտնուող Հայաստանն անցել էր Օսմանեան կայսրութեանը: Ի դէպ, պատմութիւնից զիտենք, որ իրանի տիրապետութեան տակ եղած ժամանակաշրջանում հայ-իրանական յարաբերութիւններում ջարդեր, ցեղասպանութիւններ չեն եղել, իսկ օսմանեան արշաւանքները բերում են հայերի արտագաղթ դէպի Կիլիկիա, դէպի Անատոլիա, Յունաստան, Բալկաններ եւ այլն:

Օսմանեան կայսրութեան վերջին շրջանն ընդգրկում է 1812-1923 թուականները: 1923 թուականի Հոկտեմբերի 29-ին ստեղծուած է հանրապետական Թուրքիայի ներկայիս պետութիւնը: Եթէ ժամանակակից Թուրքիայի Հանրապետութիւնը ուղիղ մէջտեղից ուղղաձիգ կիսենք, աջ հատուածն ամբողջութեամբ կը կազմի Արեւմտեան Հայաստանը: Մինչեւ 1960-ական թուականները հանրապետական Թուրքիայում հայկական բոլոր տարածքները՝ վիլայէթները, քաղաքներն ու գիւղերն իրենց հայկական անուանումները պահպանել էին: Վերջերս, լեզուաբան Սեւան Նշանեանը Պոլսում հրատարակեց «Անունը մոռացող երկիր» գիրքը, որտեղ փաստում է, թէ ինչպէս Թուրքիայի Հանրապետութիւնում յունական, հայկական ծագմամբ դարաւոր տեղաբնակներն անուանափոխուեցին թուրքական անհետեւ անուններով:


Ս. Հացպանեանը ցոյց տուեց 1915 թուականին Թուրքիայում գործած հայկական դպրոցների քարտէզը եւ ընդգծեց, որ այդ ժամանակ մեր դպրոցների թուաքանակի նոյնիսկ 0,2%-ը չունէին ուսումնաստեղութիւնից զուրկ թուրքերը: Ցոյց տուեց նաեւ մի այլ քարտէզ, ուր պատկերուած էին այն հաւաքատեղի-քաղաքները, որտեղից հայերը քշուած էին Տէր-Չօր եւ նկատեց, որ դաւանափոխ հայերի աւելի շատ կարելի է գտնել այդ տարածքներում՝ Դերսիմ, Բիթլիս, Վան, Սեբաստիա, Մալաթիա, Մուշ, Սասուն, Ադիաման, Բինգիլի եւ այլն: Վերլուծաբանն ընդգծեց, որ թրքացուած հայեր ասելու տակ պէտք է հասկանալ նաեւ ալեւիացած, զազայացուած, ասորացուած, քրդացուած, արաբացուած հայեր:

Ցեղասպանութեան ենթարկուած այս ամենամեծ խմբի նկատմամբ աշխատանքներ չեն կատարուել: 1916 թ.-ին Չեմալ Փաշան՝ Օսմանեան կայսրութեան Մովլային նախարարը (երիտթուրքերից), որոշում է ողջ մնացած հայ որբերին հաւաքել եւ թրքացնել: Այս գործը վստահում է սալոնիկցի մի հրեայ դաւանափոխ իսլամացած կնոջ՝ Հալիդէ էրիպին, ով եւրոպական լաւ կրթութիւն էր ստացել: Նա զբաղուելու էր Լիբանանի, Սիրիայի ճամբարներից հաւաքուած հազարաւոր հայ որբերով: Սարգիս Հացպանեանը ցոյց տուեց հարեմի մի լուսանկար, ուր պատկերուած էին հայ դեռատի աղջիկ

որբերը, որոնք սպասարկում էին թուրքական բանակի բարձրաստիճան գինուորականներին:

Երիտթուրքերի պարտութիւնից յետոյ, Հալիդէ էրիպը 1919 թ.-ին մտաւ Մուստաֆա Քեմալի առաջնորդած, այսպէս կոչուած, «ազատագրական շարժման» մէջ եւ լծուեց նոր Թուրքիայի ստեղծման գործին: Լուսանկարներից մէկը պատկերում էր Հալիդէ էրիպին Սուրբ Սոփիայի Մայր Տաճարի տարածքում 100 հազարանոց միտինգաւորներին Մուստաֆա Քեմալին միանալու կոչ անելիս: Հայ որբերի թրքացումը ոչ միայն Հալիդէի, այլեւ միւսների աշխատանքն էր: Էրզրումի շրջանում՝ արեւելեան ճակատում, հազարներով որբ երեխաների հաւաքելով՝ Կարաբէքիր փաշայի օգնականը՝ Ֆեզի Չաքմաքը, ստեղծել էր «Ժիր երեխաների» ճամբար, 4 տարի շարունակ թրքացման պրոցէս անցնելուց յետոյ մօտ վեց հազար որբ դարձան գինուորներ եւ կուում էին հայերի դէմ Կարսում, Ալեքսանդրապոլում եւ այլ տարածքներում: Երբ Չաքմաքին հարցնում են, թէ թրքացած երեխաներին ինչպէ՞ս էք վստահում, ասում է՝ «Կուլտուրապէս բոլորից բարձր, բազմակողմանի զարգացած գենետիկա կրող ազգի երեխաները մեզ այնքան կը ծառայեն, որ նոյնիսկ երազել չէինք կարող»: Հացպանեանը ցոյց տուեց նաեւ 1919 թ.-ի Կ. Պոլսի Փերա թաղամասի ներկայիս Թաքսիմում եղեռնի զոհերի յիշատակին նուիրուած առաջին յուշարձանի (այն տեղադրել էր հայկական կոմիտէն) լուսանկարը:

Հրապարակախօս-վերլուծաբանը պատմեց նաեւ Թուրքիայում 1921թ., 1925թ. եւ 1930-1931թթ. տեղի ունեցած ապստամբութիւնների մասին, որտեղ մեծ դերակատարութիւն են ունեցել հայերը: Մինչ այդ, երբ ուսանելը 1916 թուականին հասել էին Երզնկա, տեղի հայութիւնն ու զազաները ապստամբելով Թուրքիայի դէմ, համատեղ հիմնել էին «Երզնկայի խորհուրդը» եւ դիմել էին Ռուս



սաստանի օգնութեանը, որպէսզի իրագործել կարողանան իրենց անկախութիւնն ու պահպանեն ինքնիշխանութիւնը:

Առաջին ապստամբութիւնը եղել էր Քոչկիրում, երբ տեղի էթնիկ հայերը, 16 ալեւի զազա աշխրեթներ, թուով՝ 135 հազար մարդ, ապստամբելով Թուրքական իշխանութիւնների դէմ, պահանջում էին, որպէսզի իրագործուի Սեւրի դաշնագիրը: Սա ապստամբեան մէջ միակ ապստամբութիւնն է, որը պահանջում էր Սեւրի դաշնագրի իրագործումը: Այն, ինչպէս եւ 1925 թուականին՝ Շէյխ Սաիդի եւ 1930-1931 թթ. Աղըրի (Մասիս սարի տարածքում) ապստամբութիւնները, դաժանօրէն ճնշուել են: Վերջին ապստամբութեան Ջիլան Բէյ ծածկանուտով ղեկավարը, ինչպէս գրում է Կարօ Սասունին, ինտուսի Արտաշէս Մուրադեանն էր: Շէյխ Սաիդի ապստամբութեան շրջանի ղեկավարներից մէկը՝ հայազգի Գէորգ Հալաջեանն էր, ով 1925-1928 թուականները թուրքական բանուում անցկացրեց: Այդ ընթացքում գրում է իր «Դէպի կախաղան» գիրքը, որն իրենից ներկայացնում է բանտային արտասովոր մի օրագիր: Բերդում նստած՝ նա կարողանում է շրջան առ շրջան հաւաքել վերապրող հայերի թիւը: 1932 թուականին Պոսթոնում լոյս է տեսել Գէորգ Հալաջեանի (ներկայանում է որպէս Թափառական) «Դէպի կախաղան» գիրքը:

Սարգիս Հացպանեանը խօսեց նաեւ հանրապետական Թուրքիայում ապրող ցանկացած ազգի սիրելի, օպերային երգիչ, յայտնի պարիթոն Ռուհի Սուրի (ուռնչանակում է հոգի, իսկ սուր՝ ջուր, այսինքն՝ հոգու ջուր) մասին, ով Կոմիտաս վարդապետի նման շրջել էր հանրապետական Թուրքիայի ողջ տարածքով, Արեւմտեան Հայաստանով, գրի առել հայկական երգերը, մաքրել օտար նորամուծութիւններից եւ փրկել ոչնչացումից: Ռուհի Սուրի ծնուել էր Վանում՝ 1912 թ.: Ցեղասպանութեան ժամանակ կորցրել էր ողջ ընտանիքը, այնուհետեւ բերուել էր Ատանա, սկզբում յանձնուել էր մի թուրք ընտանիքի, յետոյ տրուել էր որբանոց, որտեղ էլ երաժշտութիւն էր սովորել, յետագայում աւարտել կոնսերուատորիան: Միայն 1960-ական թուականների սկզբներին խօսուեց նրա հայ լինելու մասին, երբ երգիչը մի բանաստեղծութիւն էր գրել իր արմատների մասին: Ռուհի Սուրի մահանում է 1985 թ.: Նրա մահից յետոյ կինն ու որդին յայտարարում են, որ նա հօր եւ մօր կողմից ոչ մի ազգական չունէր, սակայն ամէն ինչ առաւել քան պարզ էր բոլորին: «Եթէ մարդ ծնուած է 1912 թ. Վանում եւ ոչ մէկը չունի... ուրեմն իմ հայրը ծագումով հայ է», - վերջին տարիներին եզրակացրել էր որդին՝ Ըլգազ Սուրի:

ԳՈՅԱՐ ԱՐՇԱԿԵԱՆ «Առաւօտ» օրաթերթ

Advertisement for the 60th anniversary of the Noh Serqunt Cultural Association. Text includes: 'ՆՈՐ ԱՆՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 60-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ', 'ՀԱՐԱԹ, ՄԱՐՏ 7, 2015ԻՆ', 'ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 8:00ԷՆ ՍԿՍԵԱԼ', 'DREAM PALACE-ի ՀՔԵՂ ՀԱՆԴԻՍԱՍՐԱՀԻՆ ՄԷՋ', '510 E. Broadway Ave. Glendale CA. 91205'.